

# ՎԱՀԱՆ ԹԷՔԷԵԱՆԻ ՆԱՍԱԿՆԵՐԸ ԹՈՐԳՈՄ ՊԱՏՐԻԱՐՔ ԳՈՒՇԱԿԵԱՆԻՆ

ՎԱՉԷ ՂԱԶԱՐԵԱՆ

Հետագայ էջերով ընթերցողին կը բացուի նամակախումբ մը, որուն հեղինակն է իր բանաստեղծի, խմբագիրի, կրթական ու հասարակական գործիչի եւ մտածող մարդու ինքնուրուի տող առ տող քակող Վահան Թէքէեանը (1878-1945), իսկ հասցէատէրն է Երուսաղէմի Հայոց Պատրիարք Թորգոմ Արք. Գուշակեան (1874-1939) բանասէր հոգեւորականը, որուն հետ Թէքէեանի ծանօթութիւնը սկսած է Պոլիս եւ շարունակուած ու ամրապնդուած է Գահիրէ, ուր մին ղեկավար դերեր ստանձնած է թեմական կառույցին մէջ իբրեւ Քաղաքական Ժողովի ատենապետ կամ այլապէս, իսկ միւսը վարած է թեմակալ առաջնորդի պաշտօնը:

Բարեկամի մը անձնական արխիւէն մեզի տրամադրուած այս նամակներէն որոշապէս կարելի է հետեւցնել թէ անոնք չեն ներկայացներ ամբողջութիւնը Թէքէեանէն Գուշակեանին ուղղուած նամակներուն, բայց թերեւս կը կազմեն մեծամասնութիւնը այն նամակներուն, զորս Գուշակեան ստացած է Թէքէեանէն՝ Երուսաղէմի Հայոց Պատրիարքութեան ծանր պատասխանատուութիւնը ստանձնելէ ետք:

Գուշակեան Թէքէեանէն նամակներ ստացած էր Երուսաղէմի Հայոց Պատրիարք դառնալէ առաջ ալ:

Ատենին Եղիշէ Չարենցի անուան Գրականութեան Եւ Արուեստի Թանգարանի Վահան Թէքէեանի Ֆոնտին մէջ հանդիպած էինք ձեռագրին Թէքէեանէն Գուշակեանին հասցէագրուած 7 Սեպտեմբեր 1926 թուակիր նամակի մը, որ լոյսին բերուած է Մամուլի Մէջ Տպուած Եւ Անտիպ Երկեր Եւ Նամակներ Վահան Թէքէեանէն հատորին մէջ<sup>1</sup>: Թէ նամակը ղրկուած է՞ր, թէ՞ ոչ՞ այդ ուրիշ հարց:

Հիմքեր ունինք ենթադրելու թէ Թորգոմ Պատրիարք Եգիպտոսի առաջնորդութիւնը վարած օրերուն Թէքէեանէն ստացած նամակները ձգած է ետին, Գահիրէի առաջնորդարանի դիւանատան մէջ, ինչպէս որ ետին թողած էր, օրինակ, Միհրան Տամատեանի կենսագրականը, որուն յիշատակումը կը կատարուի հոս հրատարակուող նամակներէն վերջինին մէջ:

Նամակներուն մէջ Թէքէեանը կը ներկայանայ իբրեւ անձ մը, որ տէր է բիրտուն առողջութեան: Անոր ամօթխածութիւնը խոցոտուած կը թուի ըլլալ իր յոբելեանին կազմակերպումով, որ, հակառակ գոյացած նիւթական միջոցներուն - կաթիլ մը՝ ծով պէտքերու մէջ - քերթողը չէր ձերբազատած մնալուն հնչուէն պարուստի պաշտօնական եւ տուայտանքէն անորոշութեան՝ երբ աշխատանքային պատեհութիւններ կը ներկայացուէին իրեն:

Ընդհանրապէս քերթողական արուեստի եւ մասնաւորաբար Թէքէեանի քերթողական հաւատամքին առնչութեամբ խօսուն է նամակներէն այն, որուն մէջ քերթողը նամակընկալին կը յիշեցնէ թէ տաղաչափեալ գործի մը համար ամէն բանէ առաջ երաժշտականութիւնն է պէտք, ինչպէս կը դաւանէր Փրան-

սացի բանաստեղծ Վերլենը, եւ կը յորդորէ խուսափիլ երկար բառերու օգտագործումէն:

Սիւրբաբացած հայութեան հաւաքական կեանքէն անբացակայ նահանջը իր ստուերը կը պարզէ հո՛ն, ուր Թէքէեան կ'աւաղէ ընկերային կեանքի քայքայումը, նորերու չհասնիլը, հասածներուն փտումը, կամ զինք վերստին ուսուցչական ու տեսչական պաշտօնի կոչող հրաւերները կը նկատէ արտայայտութիւնը հին եւ տարեց կրթական մշակներու հետզհետէ անհետանալուն եւ նորերու չհասնելուն:

Թէքէեան նկատուած է դժուարածին բանաստեղծ: Մէկէ աւելի նամակներու մէջէն դուրս սողոսկող տողեր ապացոյցը կը բերեն այդ դժուարածնութեան, միանգամայն շրջանակելով իրենց անուրանալի ազդեցութիւնն ունեցած արտաքին ազդակները (վատառողջութիւն, միջավայր, աշխատանքի բնական պայմաններու բացակայութիւն, եւ բացակայութիւնը մինչեւ իսկ զգրոցաւոր գրասեղանի մը, որ այնքան տխրանոյշ բայց եւ հիւմըրով լեցուն տողերով կը ներկայանայ 24 Դեկտեմբեր 1933 թուակիր նամակով: Երգիծանքով թեթեւցած, տանելի դարձուած ողբերգութիւն մը, որ աղերս մը կը յուշէ Արեւի 4 Ապրիլ 1942ի թիւով հրատարակուած «Անտունի» քերթուածին հետ:

Աստուած, տըլիւ շատերու տո՛ւն մը, հոգ չէ թէ վարձու...<sup>2</sup>

Ըսինք երգիծանք: Հագուադէպ չէ ան հոս ներկայացուող նամակներուն մէջ, ուր մերթ ալնյայտ է զինք մօտէն չճանչցողներու համար,- օրինակ, երբ գրողը կը գրադի բառախաղերով (տաքին suppliceը կը կրեմ S<sup>t</sup>. Sulpiceն հովանիին տակ),- մերթ ալ թափանցիկ է միայն զինք ճանչցողներուն համար եւ կը բացայայտուի անոնց արձագանգին ընդմէջէն, ինչպէս է պարագան 22 Մարտ 1935 թուակիրին: Ընթերցողը լուրջ տողերու պիտի հանդիպի կարգալով թէ Թէքէեան կը ծրագրէ Անթիլիաս այցելել Զատիկին ... մինչեւ որ այդ լրջութիւնը թացիկանայ հանդիպելով յաջորդ` 26 Ապրիլ 1935 թուակիրին սա տողերուն. «Անթիլիասի պատմութիւնը հնարուած էր, ինչպէս ճիշդ գուշակած էք, ձեզ նախանձաբեկ սրտմտութեամբ տոչորելու համար միայն... »:

Այս նամակներուն տողերը նաեւ կը մատնեն արդարատեսչութիւնը Թէքէեանին եւ ընդվզումն անոր՝ հանրապետական արարքներու դէմ, անկախաբար անոնց տարողութենէն ու ծիրէն, անհատէ մինչեւ բազմութիւն: Անպարկեշտ մօտեցումի հետեւանքով «անսուաղ մնացած» պաշտօնաթող եւ հաւատափոխութեան հետամուտ պատուելիին, Պայաքեանով ստեղծուած գայթակղութեան կամ Ղեւոնդ Եպս. Դուրեանի սպանութեան անդրադարձող տողերը, ուրիշներու կարգին, խօսուն են այս ուղղութեամբ:

Կարելի է նամակներէն իւրաքանչիւրէն ոստում մը կատարել՝ զայն առնչակցելու համար Թէքէեանի կենսագրութենէն դրուագի մը կամ ստեղծագործութիւններէն նմոյշի մը կամ նմոյշներու, բայց հոս տեղը չէ նման տարածումի մը:

Բաւականանանք նշելով թէ նամակները, ծայրէ ի ծայր, կ'ուրուագծեն նաեւ տիրական գիծերէն մի քանին Թէքէեանին, ծանրախոհութիւնն ու յարգանք պարտադրող արժանապատուութեան զգացողութիւնը ներառեալ:

Հետագայ տպագիր էջերով լոյսին բերուող նամակներուն լեզուական հարգատուութիւնը խաթարած ենք ոչ իսկ կէտադրական դոյզն փոփոխութեամբ:

1.

Փարիզ, 11 Դեկտ. 931

Սիրելի Սրբազան,

Սրտագին շնորհատրուփինս եւ խնդակցութիւնս Ձեր ողջամբ Երուսաղէմ ժամանելուն եւ պատրիարքական գահը բարձրանալուն առթիւ<sup>3</sup>. Tout est bien qui finit bien<sup>4</sup>; ասիկա՝ նոյնքան նոր պաշտօնին ձեւակերպութիւններուն, որքան հին պաշտօնին վերջատրութեան համար. Եզիպտոսի Հայերը իրենց ըրած կորուստին գիտակցեր եւ ըստ այնմ նուիրագործեր են Ձեր եօթնետասնամեայ գործունէութիւնը իրենց մէջ.- կը յուսամ որ նորին համար ալ կրնաք ըսել ... qui commence bien<sup>5</sup>. կը մտաբան:

Գալով ինծի, հասաւ արդէն ատենը ուր անցեալ տարուան չափ եւ ատելի՝ աշխարհը ծանր է վրաս: Երեք ամիս սպասելէ վերջ, Ձեր բարեկամին (Նիս) գրեցի անցեալ շաբթու. երէկ ստացայ նամակ մը, բաւական չոր եւ ազդու, որ անյաջողութեան մը կ'ակնարկէ՝ հաւանօրէն բան մը ըսած ըլլալու համար միայն, եւ կը ներկայացնէ գրողին յարգանքները: Ծակատագիր. թո՛ղ ուրեմն Տիրոջը կամքը ըլլայ, ինչպէս որ պէտք է:

Ընդունեցէք, սիրելի Սրբազան, յարգանքի եւ սիրոյ զգացումներս Վահան Թէքէեան

2.

22, rue St Sulpice

Paris (6<sup>e</sup>)

Փարիզ, 3 Յունվար 1933

Սիրելի Սրբազան,

Տիկին Իսկիկեան<sup>6</sup>, ներփակեալ նամակը ինծի դրկելով, կը գրէ որ եթէ իր ոճը պատրիարքի մը համար պատշաճ չգտնեն՝ չորկեմ գայն, հակառակ որ շատ կը փափաքի իր միշտ երախտագէտ ըլլալը յարգանօք յայտնել Ձեզի:

Քիչ կը մնայ որ ես ալ նոյն երկիւղն ու վարանումն ունենամ: Ի՞նչպէս պէտք է գրել Ձեզի: Պէ՞տք է գրել թէ ոչ: Կ'ուզե՞ք որ գրեն թէ չէք ուզեր: Այս հարցումները գոյութեան իրատունք պիտի չունենային՝ եթէ անցեալ տարուան նամակիս երկտող պատասխան մը գտնէ ստացած ըլլայի, այն նամակին՝ որուն մէջ լորի մը հետեւանօք մտքէս անցածը Ձեզի հաղորդելու, անոր մասին Ձեր կարծիքն ուզելու յանդգնութիւնն ունեցեր էի, բաւական անխորհուրդ կերպով եւ առանց որ այդ գրածս իրական մտածումի մը, փափաքի մը համապատասխանէր գէթ: Անկէ ի վեր տարի մը, եթէ ոչ ատելի, անցաւ. ես միշտ հոս եղայ, նախ սովորականին պէս, յետոյ սովորականէն տարբեր, մայիսին եւ յունիսին հիւանդանոցները եւ յուլիսէն ասդին մինչեւ այսօր դէռ սես կապով մը աչքս կապուած<sup>7</sup>, բայց, փառք Աստուծոյ, հետզհետէ ատելի աղէկ եւ գոհ մանաւանդ այն պատճառով՝ որ կեանքէն եկած այս նոր փորձանքը փոխանակ զիս դառնացնելու կամ ըմբոստացնելու կեանքին դէմ, ընդհակառակն կակղեցուց սիրտս եւ ատելի մեծ համակերպութեամբ մը գայն խոնարհեցուց կեանքին, անշուշտ նաեւ մարդոց առջեւ: Այսպէս է որ կը պատրաստուիմ հիմա, անմիջապէս որ կարելի ըլլայ, եւ կը յուսամ կարելի պիտի ըլլայ այլեւս շուտով, աշխատութեան սկսիլ՝ ութ ամսուան ականայ ծուլութենէ մը ետք:

Պոլսոյ Ազգ. Հիւանդանոցին նոր տարեցոյցը<sup>8</sup> դուք ստացած էք թերեւս, ես՝ դէռ ոչ, ու տեսած էք այն ոտանատրը զոր այստեղի հիւանդանոցէն ելլելու ետքը, տարեկան սովորական հրաւերին ի պատասխան, դրկեցի Տէր Մեսրոպ

Պատրիարքին<sup>9</sup>, գայն ձօնելով Ձեզի: Այդ ձօնը՝ ոչ միայն անոր համար, որ նիւթը Ձեզմէ առած են, Պուլաքի<sup>10</sup> սրահին մէջ երկար ասուեպատ սեղանին մէկ կողմէն միւսը դէմ առ դէմ խօսակցութեան մը պահուն պարտիզակեան ասանդութեան մը Ձեր մէկ անցողակի յիշատակութենէն՝ որ հմայած եւ տպատրած էր զիս, այլ եւ, որովհետեւ առանձնութեան մէջ յաճախ խորհած էի ջուրի պէս անցած եզիպտաբնակ կեանքիս տարիներուն, լեցուն տենդով, կռիւով, զուր յոյսերով եւ զուր աշխատանքով, տարիներ որոնց յուշանցքին մէջ յաճախ ներկայ էիք նաեւ դուք: Այս կրկնակ պատճառով էր, որ առանց նախապէս Ձեզնէ արտօնութիւն խնդրելու, ինչպէս կ'ընդունիմ թէ պարտաւոր էի ընել, համարձակեցայ հրապարակաւ Ձեր անունը գրել «Անտառին Աստուածամայրը» վերնագրեալ ոտանաւոր հեքիաթին ճակատը, գիտնալով հանդերձ որ ան շատ քիչ արժանի է Ձեր բարեհաճ նայուածքին: Ատոր համար կ'ապաւինիմ հիմա Ձեր ներողամտութեանը:

Ուրախութեամբ իմացայ Հայկ Թորգոմեանէն<sup>11</sup>, երբ երկու ամիս առաջ վերադարձաւ այստեղ, որ Ձեր առողջութիւնը աւելի լաւ է Երուսաղէմի մէջ քան էր Գահիրէ: Քաշուեցայ հարցնելու, եւ ան չըսաւ ինքնին, թէ Ձեզնէ ողջոյն մը ինձի կը բերէ՞ր միասին, բայց միւս բարի լուրը կը լեցնէր յուսախաբութեանս փորած փոսը: Ատկէ զատ, 'Արեւ'ն<sup>12</sup> է նորէն – շնորհակալութիւն իրեն – որ ինձի երբեմնակի տեղեկութիւն կուտայ Ձեր մասին:

Եզիպտոս դառնալու հարց մը ունիմ, ձեռով մը որ հեռու է զիս խանդավառելէ. այս օրերս պարտաւոր եմ գայն վճել սակայն:

Ընդունեցէք, սիրիլի Սրբազան, ինչպէս միշտ նոյնպէս այժմ, որդիական խոնարհ յարգանքս եւ սրտագին զգացմանցս հաւաստիքը՝ Ս. Ծննդեան եւ Նոր Տարւոյ շնորհատրութիւններուս հետ:

Վահան Թէքեան

### 3.

Փարիզ, 21 Ապրիլ 1933  
22, rue S<sup>t</sup> Sulpice, Paris (6<sup>e</sup>)

Սիրելի Սրբազան,

Շնորհակալ եմ Ձեր երկու նամակներուն համար. կրկնապէս յանցաւոր եմ առաջինին պատասխանը ուշացնելուս եւ Ձեզմէ առաջ Ս. Յարութեան տօնը Ձեզի շնորհատրած չըլլալուս համար. բարեբախտաբար երկրորդ պարտքս քառասուն օրուան պայմանաժամ մը ունի եւ ահա կը հատուցանեմ գայն՝ մաղթելով Ձեզի առողջութիւն. մնացածը մեծ չափով ատկէ կախում ունի՝ կ'ըսուի:

Ձեզմէ զատ ուրիշ բարի հոգիներ<sup>13</sup> ալ կան այդտեղ որ ինձմով կը հետաքրքրուին. ամէն պարագայի՝ ամէնուն ալ շնորհակալ եմ եւ կը յայտնեմ որ առողջութիւնս բաւական լաւ է (աչքս եւ ճակատս դեռ մնացորդ մը կը պահեն *զօնախէն*<sup>13</sup>) ու կրնամ հիմա աշխատիլ այնքան՝ որ քերթուածներու պզտիկ հաւաքածոյ մը (100 էջի չափ, անտիպ եւ հանդէսներէ առնուած) կազմելու վրայ եմ. տպագրութիւնը սկսած է. եթէ ուրիշ պէտքի մըն ալ չծառայէ՝ զիս քիչ մը ոգեւորելու ծառայութիւնը ան մատուց ինձի:

Եզիպտոս պիտի երթայի եւ հաւանօրէն երթամ նորէն. հրաւերը այսպէս էր. բնակիլ եւ ճաշել Պէրպէրեան վարժարանի<sup>14</sup> մէջ՝ շաբաթական 4-5 ժամ դասի փոխարէն. 'Արեւ'ին ամսական 4-5 յօդուած տալ՝ 5 ոսկի ամսականի փոխարէն, զոր բարեկամներ, 'Արեւ'ի սովորական պիտճէնէն դուրս, ստանձնած են

եղեր հայթայթել: Չեմ կրնար ըսել թէ խանդավառութեամբ բայց վերջապէս ընդունեցին այս պայմաններով ուղղուած հրաւերը՝ յուսարով որ տեղւոյն վրայ կարելի պիտի ըլլայ նաեւ կարգադրել Նուպարեանի<sup>15</sup> տեսչութիւնը որուն մասին անցեալ տարի խօսուած էր: Ընանապարհածախսն ալ դրկեցին բայց չկրցայ մեկնիլ՝ որովհետեւ աչքս աղէկ չէր այդ միջոցին. ամիսէ մը, կը յուսամ, թէ՛ տպագրութեան գործը կ'աւարտի եւ թէ աչքս թոյլ կուտայ որ ճամբորդելով երթամ վայելել եգիպտական ամառը իբր օդափոխութիւն:

Վայագայի<sup>16</sup> մէջ տեսած էի Պէյրութի դասախօսութիւնը<sup>17</sup>: Շահէ Սրբազանը<sup>18</sup> շատ ու շատ ազնիւ եղած է անոր նախագահելով ու խօսելով ինչ որ խօսած է: Ուզեցի իրեն գրել բայց յետոյ խորհեցայ որ գուցէ իրատունը չունէի: Թերեւս դուք հաճիք առիթով մը իրեն յայտնել թէ զգածուած ու երախտապարտ եմ չափազանց: Գալով Պ. Ապտալեանի<sup>19</sup> դասախօսութեան՝ ուրախ պիտի ըլլայի Ձեզմէ վերջ եւ ալ զայն տեսնելով եւ իրեն ալ սրտովին շնորհակալ ըլլալով:

Ցաւով լսեցի թէ՛ Չաւեն Սրբազանի<sup>20</sup> տառապալից հիւանդութիւնը եւ թէ Թիւքիստանի<sup>21</sup> մահը. Աստուած կեանք եւ քաջութիւն տայ մնացողաց:

Ձերոյ շատ սիրով եւ յարգանքով

Վահան Թէքէեան

4.

5 Յուլիս 1933

22, rue S<sup>t</sup> Sulpice, Paris (6<sup>e</sup>)

Սիրելի Սրբազան,

Ստացած եմ Ձեր երկու նամակները, 30 մայիս եւ 27 յունիս թուականով:

Եգիպտոս չգացի, չկրցայ ու չէի ուզեր արդէն երթալ, որովհետեւ այդ միջոցին յանկարծ քանի մը բարեկամներ մէջտեղ հանեցին այն ձեռնարկը (Յորելեան!)<sup>22</sup> գոր նախ մերժեցի, յետոյ ընդունեցի՝ ճնշում ի գործ դնելով մանաւանդ ճաշակի եւ խղճահարութեան բողոքներու վրայ, որոնք երկուքն ալ վիրաւորուած կ'զգային ու պիտի վիրաւորուին դեռ շա՛տ՝ մինչեւ որ ամէն բան վերջանայ, վեց կամ եօթը ամիսէն: Գրած էի թէ Պէրպլեան վրժ.ի գործը ո՛րքան քիչ կը ժպտէր ինձի. յոյսս մեծ չէր նաեւ Նուպարեանի համար, որ ճիշդ այս օրերս վճռուեցաւ ժխտականով: Իսկ ամառը Եգիպտոս անցընելու հեռապատկերը ուղղակի սոսկում կը պատճառէր ինձի, սոսկում մը որ մեղմուեցաւ Ձեր Երուսաղէմի շատ ազնիւ, շատ հաճելի ու սիրելի հրաւերով, որուն համար խորապէս շնորհակալ եմ: Բայց առ այժմ հոս եմ, ինչպէս կը տեսնէք, թէն հոս ալ, այս երկրորդ ամառը գոր կ'անցընեմ քաղաքին կեդրոնը՝ նեղ փողոցի մը մէջ, աջ աչքիս ու ճակատամասիս վրայէն դեռ չվերցած ու միշտ ջրոտող ծանրութեամբ մը, հեռու է առողջարար ըլլալէ: Այսուհանդերձ ուրիշ կերպ չեմ կրնար ընել եւ նորէն գոհ պիտի ըլլամ եթէ նոր հրատարակութեանս վաճառումը ինձի թոյլ տայ այս քանի մը ամիսը քաշքշել ու այնուիտեւ միջոց ունենալ ընելիքս որոշելու:

Ստացայ նաեւ եւ կարդացի, տրտմաժպիտ ոգեւորութեամբ մը, Ապտալեանի դասախօսութիւնը գոր հաճեր էիք դրկել: Յուզիչ էին որքան իր համակրութիւնը նոյնպէս թափանցելու համար իր կատարած մեթոտիք ջանքը, մեծ մասամբ արդիւնատր: Գրեցի իրեն եւ դրկեցի գիրքէս օրինակ մը:<sup>23</sup> Այդ ձեռագիրը իրմէ ուզեր է եղեր նաեւ Չօպանեան<sup>24</sup>, որ ուզեց ինձմէ ալ եւ որուն պիտի յանձնեմ զայն, թէն կ'ըսէ թէ նոյն իսկ այն պարագային ուր

հաւնի՝ պիտի չկրնայ ‘Անահիտ’ի<sup>25</sup> այս թիւին մէջ հրատարակել, ու յաջորդով՝ հաւանօրէն մաս մը միայն պիտի կրնայ տալ:

Շատ շնորհակալութիւն, դարձեալ, ‘Մէր’ը<sup>26</sup> գնահատող, բացատրող Ձեր տողերուն համար: Նոյնպէս՝ անկէ 10 օր[ինակ] դրկելու Ձեր յանձնարարութեան համար: Այս 10 օր[ինակ]ը երէկ դրկուեցաւ: Կը խնդրեմ որ չնեղուիք անմիջական տեղատրման մասին:

‘Արեւ’ի վերաբերմամբ Ձեր դիտողութիւնը արդար է բայց ինծի չիյնար զայն կրկնել. մերոնք գոհ են եղեր Պօղոսեանի<sup>27</sup> աշխատանքէն, որ միութապէս արդիւնատու եղեր է բաւական, ինչ որ կարելու է անշուշտ, բայց ամէն բան չէ դժբախտաբար. մաղթենք որ ան կարենայ գոհացնել՝ միեւնոյն ատեն՝ անկախ եւ անելի լայնատես ընթերցողները:

Հոս հանրային կեանքը Ձեր գիտցածին պէս եւ անելի գէշ է. մարդիկ հետզհետեւ անելի կը խրին անտարբերութեան արագին մէջ. ամէնէն ցաւալին՝ Բարեգործականի<sup>28</sup> մէջ տիրող մտատրական եւ հոգեկան վիճակն է. ոչ ոք կ’ուզէ գիտնալ եւ զգալ՝ թէ այդ մարմինը կրնայ փրկարար դեր մը կատարել արտասահմանի մէջ, եւ միայն ի՛նքը կրնայ կատարել այդ դերը ու եթէ չի կատարեր՝ պատճառը այն է որ routineը,<sup>29</sup> կարճամտութիւնն ու հոգիի չորութիւնը նստած են իր վրայ ծանրօրէն, անյուսօրէն:

Խոր սիրով եւ յարգանքով

Ձերդ Վահան Թէքէեան

Յ.Գ. Յուսամ թէ առողջութիւննիդ լաւ է. ուրախ պիտի ըլլամ գիտնալով թէ չէք նեղուիր յօրացաւ կամ ստամոքսէ: Ի՞նչպէս են ձերոնք. երբեմն կուգա՞ն Ձեզ սփոփելու եւ շէնցնելու. պէտք ունենալու էք ատոր:

Նոյն

## 5.

Փարիզ, 9 Օգո. 1933

Սիրելի Սրբազան,

Ուրախութեամբ եւ շնորհակալութեամբ ստացայ Ձեր 21 յուլիս թուակիրը՝ ներփակուած 139,80 Ֆր.ն չէքով, որ «իրաւունք»էս անելի է, նոյն իսկ փոսթի ծախքն ալ հաշուելէ վերջ...: Դժբախտաբար, բոլոր անոնք որ ուզեցին կամ որոնց դրկեցի ‘Մէր’ս ի վաճառ, պատրիարք չեն ու այս պատճառաւ դեռ շատերէն պատասխան մը անգամ առած չեմ...: Այսուհանդերձ, տրուած ըլլալով մեր պայմանները, դժգոհ չեմ գրքիս սպառումէն. նոյնպէս՝ անոր գտած բարոյական ընդունելութենէն, որ անելի քան բարեացական ու վեհանձն է. երէկ կարդացի դաշնակցական ‘Նոր Օր’ի<sup>30</sup> (Աթէնք) եւ ‘Արագ’ի<sup>31</sup> (Պուրբէշ) գրախօսականները. միայն այստեղի ‘Յառաջ’ը<sup>32</sup> քիմախնդիր լռութիւն մը պահեց եւ ‘Յուսաբեր’ը<sup>33</sup>... խայթեց երկիցս իր «Մամուլ»ի բաժնին մէջ: Իսկ մեր ‘Արեւ’ը ծանուցումը միայն հրատարակեց մինչեւ հիմա:<sup>34</sup>

Կ’ըմբռնեմ Ձեր գոհունակութիւնը այս տարուան հաւասարակշիռ պիտճէին դէմ, եւ յոգնութեան զգացումը՝ մէկ կողմէ պարտք չաւելցնելու ու եթէ կարելի ըլլայ՝ պակսեցնելու, միւս կողմէ հաստատութիւնը օրինատու եւ արդիւնատու վիճակի մէջ պահելու ճիգին առջեւ: Կը մաղթեմ սրտանց՝ որ գոհունակութիւննիդ աճի միշտ եւ յոգնութիւննիդ նուազի՝ երկար, շատ երկար գահակալութեան շրջանի մը ընթացքին:

Երուսաղէմի մէջ Ձեզի հետ ըլլալը չէր կրնար չժպտիլ ինծի. դժբախտաբար, սակայն, չկրցայ ամառը հոսկէ մեկնիլ եւ հիմա, իրօք, տաքին *supplice*<sup>35</sup> կը

կրեմ Տ՝ Sulpiceի հովանիին տակ, պանդոկիս նեղ եւ ցածուկ փողոցին մէջ: Յառաջիկայ Դեկտեմբերին, թերեւս, մեկնին ու Եգիպտոս, թերեւս Սուրիա ու Պաղեստին ալ գամ: Ասիկա փափաքս է, գոնէ:  
Կրկին շնորհակալութեամբ եւ շատ սիրով ու յարգանքով Ձերոյ  
Վահան Թէքէեան

6.

Փարիզ, 15 Մեպտ. 1933

Սիրելի Սրբազան,

Դիւրին չէր անմիջապէս պատասխանել Ձեր Օգո. 24ի նամակին. հոն պարտականութիւն մը դրած էիք վրաս՝ գոր պէտք էր նախ կատարելի եւ ապա Ձեզի հաղորդելի արդիւնքը:

Այդ արդիւնքը եղաւ դժբախտաբար ... ապարդիւն: Արդէն, չեմ գիտեր որ եթէ Ձեր դրած պայմանները ամբողջովին ու խղճի մտօք յարգէի՝ պիտի կրնայի՞ նոյն իսկ ձեռնարկել Ձեզի պէտք եղած, Ձեր ուզած ուսուցիչը գտնելու համար փորձ մը ընելու...: Այդ «հագուագիտ թռչունը» եւ չէի ճանչնար այստեղ, ան կրնար պահուած ըլլալ սակայն, որով փնտռեցի: Փնտռեցի գիտական դրութեամբ՝ ծանօթէն անծանօթին երթալով: Առաջարկեցի երկու երիտասարդի, որոնք անունով գոնէ ծանօթ են Ձեզի, որոնք Ձեր պայմաններէն մէկ-երկուքը կը լրացնէին եւ որոնց ըսի՝ որ մերժման պարագային ուրիշ մը ներկայացնեն ինծի: Այսպէս ալ եղաւ, այսինքն մերժեցին ... բայց չկրցան մէկը ներկայացնել, որ նախ ընդունելի՝ յետոյ ալ ընդունող ըլլար: Յարմարագոյնը, ըսեմ հիմա, Գեղամ Ֆէնէրճեանն<sup>36</sup> էր, որ առաջ մերժեց, յետոյ վարանեցաւ եւ վերջնականապէս մերժեց՝ հակառակ այն խայծին գոր երկարեցի իրեն ըսելով թէ ճանապարհածախսը կարենայի՞նք թերեւս յատկապէս ստանալ: Թէեւ հոս շատ պզտիկ գործ մը միայն ունի որ զինք չ'ապրեցներ, բայց հասկցուց որ այդքան քիչով չի կրնար ... վանական դառնալ...:

Ահա՛, ուրեմն, ամբողջ արդիւնքը ձեռնարկիս: Կը մնայ միայն, Ձեր բոլոր պայմաններէն դուրս, Պ. Եր. Տ. Անդրեասեանը<sup>37</sup>, որուն ի հարկէ ոչինչ չեմ ըսած: Մտքով եւ մարմնով առոյգ է դեռ (տղան է միայն հիւանդ ու ատոր համար ինք մտահոգ է չափազանց), աշխատիլ կ'ուզէ ու հաւանօրէն չմերժէր ընտանիքէն բաժնուիլ՝ եթէ ուզէիք զինք: Բայց կրնա՞ք ուզել:

Երկու օր առաջ Չաւէն Ս.ին մօտ էինք Անտոնեան<sup>38</sup>, Չաքրեան<sup>39</sup> եւ ես: Սէօտեօն<sup>40</sup> կը բնակի՝ օրասուն եւ գեղեցիկ տեսարանով բանսիօն<sup>41</sup> մը: Ամիս մը առաջ եղբայրը մեռեր է ի Պաղտատ ու այս պատճառաւ իր եղբորորդին որ հետն էր՝ մեկնէր է: Պ. Աբուլեանը<sup>42</sup> հեռու չի բնակիր իրմէ: Առողջութիւնը շատ բարուքած է. վերջին քննութենէ մը ետք կը խորհի մօտերս մեկնիլ՝ նախ Պաղտատ եւ ապա Պէյրութ հաստատուելու համար:

Ձեր տպարանապետը՝ Գարեգին վրդ. 2 օրինակ 'Մէր' ուզած էր. որկեցի. կը հաճի՞ք ըսել տալ որ փոխարժէքը, իր առաջարկածին համաձայն, կրնամ ստանալ գրավաճառ Պ. Հրանտ Սամուէլէն<sup>43</sup>, եթէ յանձնարարէ այս վերջինին որ տայ ինծի: Այդ յանձնարարութիւնը չ'ուշանար հարկաւ:

Յորելեանի գործը դանդաղ կը քալէ. իսկ ես կ'ուզէի ժամ առաջ վերջացած տեսնել՝ ընելիքս գիտնալու համար:

Խոր սիրով եւ յարգանքով Ձերոյ

Վահան Թէքէեան



Փարիզ 27 Նոյ. 1933

Սիրելի Սրբազան,

Գիշերը ժամը շին պառկած էի եւ մինչեւ առտու տապալկած գէշ երազներու եւ անքնութեան մէջ՝ երբ ծին ցրուիչը սենեակիս դուռը ծեծեց այնպէս ինչպէս ցրուիչները միայն հոս գիտեն ծեծել, եւ յանձնեց Տամատին<sup>44</sup> մէկ ապահովագրեալ նամակը որուն մէջ 120 Ֆր[անք]նոց չէք մը կար՝ 10 օրինակ ‘Մէր’ի փոխարէն: Ժամուկէս ետքը – բայց վերապառկած չէի, նստած կը կարդայի – նորէն նոյն ձեւով դուռս զարնուեցաւ եւ ուրիշ ցրուիչ մը 288 Ֆր. 46 «[անթիմ]ի mandat<sup>45</sup> մը դրաւ առջիս, ուղղուած Vahan Tekirahին եւ դրամը տալու համար պահանջեց որ ստորագրեմ Tekira: Այդպէս ալ ըրի. mandatն Ամերիկայէն էր, ուր անծանօթ մը<sup>46</sup> – նախկին որբ մը՝ կ’ըսէր՝ իր թէ՛ գուարթ եւ թէ՛ յուզիչ նամակին մէջ, շատ ալ աղէկ հայերէնով մը գրուած, որով 25 օրինակ գիրք ուզեր էր ծախելու համար՝ աւելցնելով «եթէ կը վստահիք» – դրկեր էի նոյնպէս ‘Մէր’, մինչդեռ նոյն օրերուն եւ անկէ առդին մերժեցի ամերիկահայ երկու գրավաճառի ապառիկ յանձնարարութիւնը՝ բերանս այրած ըլլալով անոնց մէկէն եւ ընդհանրապէս բոլոր գրավաճառներէն, նախկին հրատարակութիւններու առիթով...:

Այս պատմութիւնը – թարմ՝ երկու ժամ առաջուան – Չեզի ըրի, հարստութիւնս յայտնելու եւ ուրախութեանս Չեզ հաղորդակից ընելու համար: Եթէ Loterie Nationale<sup>47</sup> բան մը չշահեցայ – արդէն միայն առաջին tranche<sup>48</sup> տոմսակ մը ունէի – կը մխիթարուիմ տեսնելով որ քանի մը ամիսէ ի վեր 50ով, 100ով եւ 200ով ստացած գումարներս գրեթէ բոլորն ալ սիրով խառնուած են՝ սէր ‘Մէր’ի պատասխան: Մե՛ղբ որ չեմ կրնար զանոնք պահել եւ «տաքնալ» անոնցմով, քանի որ եկածնուն պէս կ’երթան:

Ընդունեցէք այս շատախօսութիւնը իբրեւ շնորհակալութիւն նոյնքան Չեր տպարանապետ Հ. Սուրբին Հրանտ-Սամուէլի միջոցաւ ըրած 2 օրինակի վճարման՝ որքան Չեր նոր ըրած 20 օրինակի յանձնարարութեան համար: Այս վերջինները քիչ մը ուշ մեկնեցան հոսկէ, որովհետեւ նախ եւ վարանեցայ այդ բեռը կրկին Չեր բազուկներուն վրայ դնելու, հոգ չէ թէ «պատրիարքաբար» զայն կրել յօժարէիք ինքնակամ, յետոյ որովհետեւ ‘Ապագայ’ի մեր ընկերը որ այդ առաքումը պիտի ընէր՝ ամբողջ շաբաթ մը ծուլացեր էր ծրարները կապելու:

Գալով Յոբելեանին, որուն վրայ խօսիլը առաջ մէկ (ամօթխածութիւն) եւ հիմա երկու (երկրորդն է ձգձգումը) պատճառաւ անախորժ է,- յուզմամբ եւ երախտագիտութեամբ տեսայ Յանձնաժողովին Չեր դրկած նամակը<sup>49</sup>: Ան տպուած է արդէն առաջին պրակին մէջ գրքոյկին որ լոյս տեսած պիտի ըլլար մինչեւ հիմա՝ եթէ տպագրիչը իր խոստումը յարգած ըլլար կամ՝ անճարակին մէկը չըլլար: Երբ վերջանայ (4 պրակ է ընդ ամէնը) իսկոյն հատ մը կը դրկեմ Չեզի. մէջը կայ նաեւ հատուած մը Օշականի<sup>50</sup> ընդլայնուած դասէն<sup>51</sup>, որուն համար երէկ նոր նամակով մը կ’իմացնէ ինձի թէ աւելի եւս պիտի ընդլայնէ ու ներկայացնէ Դուրեան մրցանակին<sup>52</sup> եւ այս նպատակով ալ ինձմէ կը խնդրէ տեղեկութիւններ ու documentներ<sup>53</sup>, որոնց հայթայթումը մեծ աշխատանք ու ժամանակ կը պահանջէ:

Լսեր էք արդէն, անշուշտ ցաւով, Պերպլեաններու տասնամեայ տագնապին վերջին ու կ’երեւի վճռական փուլը: Վարժարանը Մարսէլ փոխադրելու դի-

տաւորութիւնը իրաւ ցնորաց ցնորքն է, որ եթէ հրաշքով իրագործուի ալ՝ առջի մէկ ժամէն դատապարտուած կ'ըլլայ տխուր եւ անպատիւ մահուան մը: Հոն «Առաջնորդը» Պալաքեան<sup>54</sup> կը կոչուի եւ ոչ Գուշակեան՝ որ ընդդէմ իր մականունին իրեն տուած նախատեսութեան, ամէն ճիգ պիտի ընէր *զիրենք իրենցմէ* փրկելու համար:

Յաւեցայ Ձեր նոր մտահոգութեան եւ անոր պատճառին համար: Կարելի չէ՞ արդեօք, տրուած ըլլալով երկու տաճարներուն (Ս. Յարութիւն եւ Բեթղեհէմ) միջազգային հանգամանքն ու լատին եւ յոյն ազդեցութիւնները մերինով հակակշռելու նշանակութիւնը, անգլ[իական] իշխանութեանց վրայ բեռցնել նորոգութեանց ծախքին մեր բաժինը՝ գոնէ անտոկոս պարտքի ձեւով: Գաղափար մըն է որ կրնայ թերեւս քննուիլ, գործադրութիւնը փորձելէ առաջ:

Ձերդ շատ սիրով եւ յարգանքով

Վահան Թէքէեան

8.

Փարիզ, 24 Դեկտ. 1933

Սիրելի Սրբազան,

Շնորհատր Նոր Տարի, Ս. Ծնունդ եւ Աստուածայայտնութիւն... Կարծեմ լմանն է. Բարգէն Ս.ին<sup>55</sup> բառով, մաղթանքիս ձեւը. ամէն պարագայի՝ լման է ոգին. կը մաղթեմ որ *զայող* տարին (այս ալ միտք պահուած Աղեքսանդրիոյ համբաւատր տնօրէն Ս. Ժամկոչեանէն<sup>56</sup>) եւ ուրիշ շատ տարիներ առողջ եւ գոհ ըլլաք, գոհ աշխատանքով եւ գոհ շրջապատով՝ գոնէ այնքան որքան հասուն տարիքի փորձառութիւնը կը ներէ կամ կ'ստիպէ ըլլալ քիչով...:

Ստացայ Ձեր 332 ֆր[անք]ի չէքը եւ շնորհակալ եմ թէ՛ դրկողին եւ թէ՛ գոյացնողներուն, իրաւունքէս աւելին տալով զայն գոյացնողներուն՝ Պ. Նուրեանին մասնատրապէս, որուն մէջ խօսած ըլլալ կը թուի այս առթիւ Ղազէզ Արթինի<sup>57</sup> արիւնը: Նորէն 20 'Մէր' - բայց Ս. Տեղեացդ մէջ պէտք կա՞ր այդքանին – պիտի դրկեմ այս օրերս՝ քանի սպառած չեմ Ձեր բարեացակամութիւնն ու անոնց պաշարը:

Ձեր յանձնարարած արդարեւ շատ պզտիկ ծառայութիւնը իսկոյն եւեթ, նամակը ստացած օրս իսկ կատարեցի ... հեռաձայնով, ինչպէս թելադրած էիք: Բարունակեան պատասխանեց թէ արդէն գրած է Ձեզի, թէ 50 օրինակին 30ը ծախուած՝ մնացեալ 20ն ալ տօնական օրերու առթիւ կը յուսայ որ ծախուին: Անկէ գատ՝ հարցուցի Երուանդ Եպս.ի<sup>58</sup> (գոր եւ չկրցայ տեսնել) առաքելութեան մասին եւ լսեցի որ կէս-պաշտօնական եղած է ան, թէ Էջմիածնէն իր ունեցած յանձնարարագիրը Փարիզի եկեղ[եցական] վարչութեան վրայ՝ եղած է միայն ծախքերուն օգնելու մասին, թէ կը կարծէ որ ինք՝ Երուանդ Եպս., ուզեր է անձնապէս այս ճամբորդութիւնը կատարել եւ Գեր[ագոյն] Խորհուրդը այդ փափաքին մասնակցեր է Լիոն-Մարսէյի խնդիրները ուսումնասիրելու *միսիս*<sup>59</sup> մը կցելով անոր:- Այս առթիւ, լսեցիք թերեւս որ ծանրակշիռ գայթակղութիւն մը (լուսանկարուած նամակով թռուցիկ մը՝ Պատուիասեան անուն մէկէ մը մէջտեղ հանուած) կ'աղտոտէ Պալաքեանը այս պահուս՝ անկարելի ընելով ոչ միայն իր առաջնորդի այլ եւ եկեղեցականի պաշտօնավարութիւնը այսուհետեւ:

'Հասկ'ը<sup>60</sup> չէի տեսած (չեմ ստանար) բայց փնտռեցի եւ գտայ եւ երկու գրութիւններուն համար ալ ... մատ խածի: 'Սիոն'ին մէջ դեռ քիչ մը կը քաշուէր կարծէք. 'Հասկ'ին մէջ իր բոլոր կոշտ հատիկները թափելու վրայ է մարդս՝

իբրեւ սնունդ հոգեւոր վասն սովահար հօտին իւրոյ: Ի՞նչ ըսիք նաեւ Սահակ Կաթողիկոսի<sup>61</sup> կոնդակին մէջ «աղտոտ Պէյրութը մենք մաքրեցինք, գեղեցկացուցինք» ի իմաստով անճիշդ եւ անթաքք տողին՝ որ եթէ թարգմանուի եւ տեղացոց աչքին տակ դրուի, սքանչելի վկայութիւն մը կ'ըլլայ մեր պզտիկներէն ետք մեծերուն ալ խելքին եւ զգացումին մասին: Ասոնց դէմ միսիթարանք – էրա՞ծ սրտի... – Տամատին նամակը, արդարեւ, զոր նոյնպէս Չեր ցուցմունքին վրայ փնտռեցի եւ կարդացի 'Արեւ'ին մէջ<sup>62</sup>: Տամատը իր ծերութեան մէջ երիտասարդի առուգութեամբ եւ կատարեալ երոպացիի մը խելքովը (զոր մէջ ընդ մէջ կ'ունենայ) գրեր է զայն. եթէ չէք ուզեր որ ես հաղորդեմ իրեն Չեր սքանչացումը իմինիս հետ՝ դուք հաղորդեցէք զայն, արժանի է:

Չեր նամակին վրայ վերէն-վար աչք մը նետելով նորէն՝ գէշ զգացումով մը, նախանձով գալարուեցայ, զոր իբրեւ խոստովանահայր Չեզի յայտնելով խաղաղիլ ու ներուիլ կ'ուզեմ.- չորս սեղա՞ն երկու սենեակի մէջ. եւ անշուշտ դարակներ, զգրոցներ, պահարաններ՝ թուղթերով, տետրակներով եւ գիրքերով, մանաւանդ գիրքերով լեցուն, զորս ուզած ատեննիդ կրնաք քաշել հանել ու կարդալ: Խնդրեմ, այսպիսի խռովիչ ու փորձիչ խօսքեր մի՛ գրէք ինձի. պատճառ կ'ըլլաք որ «հոգիս կորսնցնեմ» իմ անդարակ սեղանիկիս վրայ նայե լով...:

'Սիոն'ին գաւիթին մէջ կրկին յառաջանալու պարտքս զգացեր էի արդէն. ի՞նչ մատուցումով սակայն. եթէ նիհար մեղրամոմ մը գոնէ կարենայի՞ ճարել. պիտի փորձեմ, պայուսակս տակնուվրայ ընելով (զգրոց չունիմ ու ասիկա քիչ նեղութիւն ու պզտիկ ցաւ չէ, հաւատացէք) բան մը գտնել եւ դրկել Չեզի՞ թերեւս ա՛յս իսկ նամակիս հետ<sup>63</sup>: Վահե-Վահեանը, երանի՛ իրեն, երիտասարդ է: 'Մէր'ը իրեն պէս ու իրեն արդէն բարեկամ, ուրիշ խանդավառ, հոգեշատ եւ տաղանդաւոր որբի (Ա. Անդրէասեան<sup>64</sup>, Ամերիկայէն) մը սերը բերաւ ինձի ճիշդ այս օրերս ու տաքցուց եւ ուրախացուց զիս:

Յորելեանը քիչ մը քալել սկսաւ. ողորշուեցաւ օրը՝ 11 Փետր.: Մեր Հայկը (Պէրպլերեան)<sup>65</sup> ձեռք առած է քարտուղարութիւնը: Ներփակ ցուցակով՝ ան 5 գիրք կ'ուզէ Չեզմէ, որոնց փոխարժէքը, ըստ հաշուեցոյցի, պատրաստ է հոս ինձի վճարելու, եթէ կը հաւանիք, առ հաշիւ նոր դրկուելիք 20 'Մէր'երուն:

'Պողիկոսոս'ը<sup>66</sup> պէ՛տք էր որ աշխարհաբար թարգմանուէր. քանի որ դուք կը հաւանիք կոր՝ ես ալ պիտի հաւանիմ հարկաւ. միայն, ի սեր Աստուծոյ, խստապահանջ եղէք Չեր վանկի սղումներուն, յետոյ երկար բառերուն համար. յիշեցէք "De la musique avant toutes choses"<sup>67</sup> Վեռլենի<sup>68</sup> պատուէրը:

Շատ սիրով եւ յարգանքով Չերդ  
Վահան Թէքէեան

9.

Փարիզ, 2 Փետր. 934

Սիրելի Սրբազան,

Ստացայ Չեր 13 Յունվ. թուակիր օրինագիրը. շնորհակալութիւն. միայն կադանդին չէ որ պէտք ունիմ օրհնութեան՝ թողունք «մեծնալը», բայց «զօրանալու» համար, երբ տկարանալու պատճառները կը վխտան: Երախտագիտութեամբ ստացած էի նաեւ Չեր օրացոյցի նուէրը, կարդացած անոր մէջ Չեր «ծոցին տետրակէն» արտագրուած Պարոն-Տէրի<sup>69</sup> յուսարմատ բանաստեղծութիւնը՝ Վանքի եւ միաբանութեան մասին նոյնքան յուսատու տեղեկութիւններուն հետ: Չեմ նախանձիր չորս գրասեղաններուն (բայց զգրոց մը՝ իմինիս

առջեւ՝ պիտի ուզէի միշտ ունենալ...) խորհելով թէ ինչքան օգտակար գործ կը կատարուի անոնց վրայ:

Վերջին նամակս գրեր ու գոցեր էի բայց դեռ գրականս էր երբ Ամերիկայէն չարագոյժ հեռագիրը<sup>70</sup> կարդացի Ֆրանսերէն թերթին մէջ: Մարսափած ու ընկճուած՝ սիրտ չունեցայ բանալու եւ գոնէ բառով մը զգացումս հոն յայտնելու: Բայց ամէնէն ատենի Չեզի խորհեցայ այդ պահուն՝ թէ՛ անցեալին մէջ եւ թէ ներկային: Կը հասկնամ ինչո: Անցեալը բարեբախտաբար անցած է, իսկ ներկան՝ գիտէի թէ ո՞րքան պիտի յուզէր եւ ցնցէր Չեզ՝ եկեղեցիին ու ազգին զարնուած այս դաշոյնի հարուածով... ու մարդիկը<sup>71</sup> ամէն ինչ կ'ընեն անկէ ի վեր, վերքը բաց պահելու, նոր հարուածներու սպառնալիքը զգացնելու համար: Դարմա՞նը ասոր: Եթէ կաթողիկոսներն ու պատրիարքները համախումբ բան մը չեն կրնար ընել ժողովուրդը ծառայցնելու համար՝ յուսալի չէ որ կրնայ ուրիշ միջոց մը գտնուիլ ոճիւրի եւ քայքայումի շարունակութիւնը արգիլող:

Իսկ Պալաքեա՞նը: Ո՛չ, չեմ ուզեր զիտնալ թէ մեր հանրային կարծիքը կը մարսէ այս գայթակղութիւնն ալ<sup>72</sup>: Ի՞նչ եկեղեցի, ի՞նչ նուիրապետութիւն է այս՝ որ հանրային կարծիքին պէտք ունի ասանկ պարագայի մը անգամ: Հանրային կարծիքն է որ վարդապետ ու եպիսկոպոս կը ձեռնադրէ: Չեռնադրողը պէտք չէ՞ որ ինքնաբերաբար շարժի՝ իր սխալը դարմանելու, չարիքը բառնալու համար: Իսկ եթէ պիտի սպասէ որ Մուշեղին<sup>73</sup> պէս այս ալ ինքնիրենը բարեհաճի հեռանալ՝ որպէսզի վերջէն այցի երթայ ու կերուխում ընէ հետը, թողէք որ ըսեմ թէ այդ նուիրապետութիւնը ունեցող եկեղեցին ոչինչ կ'արժէ եւ ի գո՛ր յոյս կը դնենք անոր վրայ, ի գո՛ր զայն կը պաշտպանենք:

Պերպլերեան (Հայկ) ստացած է դրկուած գիրքերը: Հաշուելով իւրաքանչիւրին վրայ նշանակուած գինը՝ ան ինծի վճարեց ընդ ամէնը 50 Ֆր., յայտնելով որ եթէ ատենի պարտական է՝ մնացորդն ալ կը վճարէ: Հաճեցէք, ուրեմն, 20 'Մեր'երու փոխարժէքէն զեղչել այս 50 Ֆր.ը: Պերպլերեան ինքն ալ պիտի գրէ ուղղակի, բայց յոբելեանով (որ 8 օրէն կը կատարուի) իրապէս շատ զբաղած է այս օրերս:

Դեռ ոչինչ գիտեմ ընելիքիս մասին: Հաւանական չէ որ կարենամ այս տեղէն շարժիլ այստեղի միջոցներով: Յետոյ, ինծի բնաւ հաճելի չէ (հասկցէք ատենին) անդաստան ընելու պէս քաղաքէ քաղաք եւ երկրէ երկիր փոխադրուիլ յոբելեանի համար: Թերեւս, սակայն, զարնան Մուրիա գամ՝ միմիայն կազդուրուելու համար աժան գինով՝ եթէ ատոր ալ կարելիութիւնն ունենամ: Վերջէն թերեւս Հայաստան երթամ՝ եթէ ուզեն:

Թորգոմեան Հայկին նամակը դրկեցի իրեն՝ քիչ մը ուշ. հասցէն չունէի. վաղուց տեսած չեմ զինք: Չերդ խոր սիրով եւ յարգանքով Վահան Թէքէեան

10.

Փարիզ 12 Մարտ 1934

Սիրելի Սրբազան,

Ձեր շնորհատրական հեռագրէն ետք ստացայ նաեւ 28 Փետր.ի նամակը: Խոր ու մեծ շնորհակալութիւն. ուրիշ ի՞նչ բառով կրնամ զգացումս յայտնել:

Առի նաեւ 182.40 Ֆր.նոց չէքը, որ ատելմալով նախապէս Պ. Հ. Պերպլերեանի վճարած 50 Ֆր.ին վրայ՝ կը փակէ 20 օր[ինակ] 'Մեր'ի վերջին հաշիւը: Շնորհակալ եմ ասոր համար ալ:

Գալով յոբելեանին, ըսե՞մ թէ ըրին ինչ որ կրնային: Թերես ոչ: Բայց գանգատիլը վայելուչ չէ: Աւելի գէշ՝ Մարսէլի մէջ: Տէսինէն՝ ատէին չէր սպասուէր արդէն իբրեւ կազմակերպական շնորհ, եւ ամէնէն անկեղծ, բոլորանուէր ճիգը հոն եղած էր: Տխոր է գիտնալ՝ ամէն օր քիչ մը ատէի որոշ ու հաստատ կերպով, թէ մարդ չունինք, չի հասնիր. հասածը կը փտի Ֆրանսայի մէջ: Ընկերային կեանքի քայքայումը կատարեալ է: Կը խօսին ամէն շրջանակի, ամէն կարգի մարդոց համար: Բան մը չեն առած նոր միջավայրէն իբրեւ խելք, իբրեւ տոկունութիւն. վրայ տուած են ինչ որ ունէին եւ կը յարմարէր իրենց հին միջավայրին: Եւ ըսել թէ կը պարծենայինք մեր adaptationի<sup>74</sup> կարողութեամբ...:

Խօսքը մէջերնիս, նիւթական արդիւնքը 16,000 է, որուն 4000ը ծախք եւ 5000ը նախապէս այս ութ ամսուան մէջ կտրուած. կը մնայ 7,000, որով կարելի է ապագայի շատ մը ծրագիրներ շինել...<sup>75</sup>

Անցեալ շաբթու Եգիպտոս երթալու հրաւեր ստացայ ու պատասխանեցի մերժումով:

Մարսէլի մէջ հիւանդացայ: Այսօր 15 օրէ ի վեր վերադարձած եմ ու աղէկնալու տեղ՝ գէշցած: Պրոնշիթ, էմբոլիտ, անթերիթ<sup>76</sup> միասին: Վերջինը ամէնէն նեղացուցիչն է: Ոչ հաց, ոչ միս, ոչ բանջարեղէն, միայն մաքարոնի եւ բրինձ կ'ուտեն: Ասոնք ալ՝ ոչ պէտք եղածին պէս պատրաստուած, քանի որ պատրաստող չունին: Քօլօլեանը<sup>77</sup> կը դարմանէ, բայց դեղը օգուտ չըրաւ. ընդհատակը:

Միոն՝ին ալ շատ շնորհակալութիւն. կը հաճիք ուսումն[ական] խորհուրդին եւ Պ. Մխալեանին<sup>78</sup> տալ ներփակ քարտերս:

Ջերմ սիրով եւ յարգանքով Ձերդ անձնուէր  
Վահան Թէքէեան

## 11.

Փարիզ 9 յուլիս 934

Սիրելի Սրբազան,

Շատոնց է չենք գրած իրարու. ո՞վ է պարտատէրը, ե՞ս թէ դուք, չեմ գիտեր, թէ՛ն՝ լայն առումով եւ «ճիշդը նայած», ես պէտք է ըլլամ միշտ, ես եմ անշուշտ:

Այս տողերս (ներեցէք թողթիս անշնորհքութեան) կ'ընկերացնեմ Տիրան վարդ[ապետ]ի<sup>79</sup> հօր եղերական մահուան առթիւ իրեն ուղղած ցաւակցական գիրիս: Հաճեցէք, խնդրեմ, գայն իրեն յանձնել: Միջանկեալ՝ գոհ եղայ այդ վարդապետը հոս ճանչնալով. խելացի, ողջամիտ, հաւատաւոր եւ եռանդուն երեսցաւ ինձի. կը յուսամ թէ չեմ սխալած:

Օշականը engage<sup>80</sup> ըրեր էք հող եւ լաւ էք ըրեր: Երբ մօտ երկու շաբաթ առաջ Մալեգեան<sup>81</sup> ինձի առաջարկեց անոր պաշտօնը Կիպրոսի մէջ (յետոյ ատկեցնելով կրթական տեսուչի, վերջն ալ վարժապետանոցի տեսուչի պաշտօնը) առաջին խօսքս եղաւ սա՛.- պայմանաւ որ Օշականը նախ ուրիշ տեղ պաշտօնի մը կոչուի: Եւ միտքս Երուսաղէմն էր՝ կը խոստովանիմ: Ատոր վրայ՝ ըսաւ թէ ինքն ալ Չեզի գրած է եւ հիմա ալ լսեցի թէ ընդունած էք: Գալով ինձի, կ'երեւակայէք թերես որ այդ պայմանով ալ շատ տաք չէի առաջարկին հանդէպ, մանաւանդ որ այնքան շփոթ էր ան: Այդ միջոցին յանկարծ Պուքրէշէն առաջարկուեցաւ տեղւոյն ազգ. վարժարանին տեսչութիւնը՝ երեք տարուան համար եւ գոհացուցիչ (ըստ հաւաստման) թոշակով մը:

Շուտափոյթ պատասխան պահանջած էին (օդանավով նոյն իսկ), գրեցի բայց տասը օր անցաւ ու դեռ պատասխան չառի<sup>82</sup>: Կը տեսնէք որ մէկէն ի մէկ ուսուցիչ ու տեսուչ դարձայ նորէն<sup>83</sup>, նոյն իսկ Ձեռքէ Ձեռք խլուած ուսուցիչ մը. պատճառը, գիտեմ եւ գիտէք, հիներուն հետզհետէ անհետանալն ու նորերու չհասնիլն է միայն:

Կը յուսամ թէ առողջութիւննիդ տեղն է եւ գործերուն հետ այսպէս թէ այնպէս «եօլա կ'երթաք»: Հոս համ-հոտ չկայ ոչ մէկ բանի մէջ: Քիչ մըն ալ ասոր համար ուզեցի հեռանալ այս տեղէն:

Ձերդ խոր սիրով եւ յարգանքով  
Վահան Թէքէեան

12.

Փարիզ, 11 Հոկտ. 934

Սիրելի Սրբազան,

Երէկ ստացայ շոգենաւէն Ձեր գրած նամակը, գոր գրել տուող զգացումին համար շնորհակալ եմ:

Ատկէ 12 ժամ վերջն ալ առի Կիպրոսէն դրկուած *visa*<sup>84</sup> արտօնագիրը: Հակառակ որ քանի մը օր առաջ Մալթեանին ըսած էի թէ շատ ուշ է արդէն եւ կը հրաժարիմ Կիպրոսի «հաճոյքներէն» եթէ արտօնագիրը գայ իսկ, Ձեր «յորդորական»ին ազդեցութեան տակ զացի եգիպտական հիւպատոսարանը, ուր հազիւ հաճեցան երեք ամսուան համար վերանորոգել ժամանակագանց *laissez-passer*,<sup>85</sup> բայց թրանզիթի<sup>86</sup> *visa* չտուին, *réponse payée*<sup>87</sup> հեռագիր մը միայն տուին Գահիրէ՝ իմ ծախքովս (118 Ֆր.): Պիտի սպասենք 3-4 օր. մերժումի պարագային՝ պիտի ջանանք ուրիշ միջոց մը գտնել: Լաւագոյն ենթադրութեամբ՝ Նոյեմբերի սկիզբը միայն կրնամ Կիպրոս ըլլալ, ինչ որ կը վնասէ թէ՛ գործին եւ թէ ինձի: Երեք ամիսէ ի վեր որոշուած էր մեկնումս: Ասիկա՝ եթէ չկանութիւն չէ, աւելի գէշ բան մըն է, *incurie*<sup>88</sup> է:

Հետեւեալին վրայ՝ Ձեր հոգածու ուշադրութիւնը կը խնդրեմ:

Երէկ, Բարեգործականի գրասենեակը, հանդիպեցայ Կիպրոսէն ելած նախկին սանի մը: Անունը Հայկազ Սինանեան, ծնողքը պարտիզակցի, ինք տարագրութեան մէջ Ըլկըն ծնած, ատեն մը Գահիրէ Ձեր քովը մնացած եւ Գալուստեանի<sup>89</sup> աշակերտած, ունի Ձեռնէ ստորագրուած վկայական մը: Մելգոնեանէն մեկնելէ վերջ՝ ատեն մը Լարնաքայի մէջ եւ վերջէն՝ Մոնթէ-Բարլօ լուսանկարչի քով աշխատեր է եւ ունի լաւ վկայականներ իր գործատերերէն: Տարիէ մը ի վեր հոս Փարիզի մէջ գործ փնտռեր է ու չէ գտեր: Լաւ տպաւորութիւն թողոց թէ՛ իմ եւ թէ Պէրպլեանի<sup>90</sup> ու Խանճեանի վրայ: Հաւաստեց՝ որ հակառակ մասնակցած չըլլալուն (ատկէ առաջ վարժարանը թողած է եղեր արդէն) երկու տարի առաջուան ըմբոստական դէպքերուն՝ մասնակից ներկայացուեր է անոնց, դաշնակցական ուսուցիչ Արսէն Աճեմեանի կողմէ: Ձեզի գրեր է, բայց պատասխան չէ առեր: Ձեր հոս ներկայութիւնն ալ շատ ուշ լսեր է ու յայտնեց թէ եթէ ժամանակին լսեր իսկ՝ պիտի չհամարձակէր դիմելու, կարծելով որ զինք յանցաւոր կը նկատէք: Չերկարեմ, գրասէր եւ քիչ մըն ալ գրող, անկուսակցական, բարեկիրթ եւ համակրելի տղայ մը՝ գոր անգործութիւնը հասցուցած է յուսահատութեան դուռը եւ որուն կրնաք ազատարարը ըլլալ կամ հող կանչելով կամ հոս մէկու մը յանձնարարելով որ *անպատճառ* եւ *չուսով* գործ մը հայթայթեն իրեն: Ձեր տուած վկայականին համաձայն թէ տարիքը 18 պէտք է ըլլայ՝ բայց 20 կ'երեւի. իր հասցէն է՝

Haigaz Sinanian, 29, rue des Abbesses, Paris (18<sup>e</sup>):

Իմ կողմէս՝ երեկ իրիկուն խօսեցայ բարեկամ լուսանկարիչի մը, որ մինչեւ հիմա շրջուն՝ խանութ մը գտնելուն պէս պիտի հաստատուի ու խոստացաւ այն ատեն միայն (1-2 ամիսէն) կանչել զայն. մինչ այդ՝ տղան, որ դեռ մաքուր հագուած է եւ մաքուր դէմք մը ունի, կրնայ ընկղմիլ. Ձեր միմիայն բարոյական հոգածութիւնն իսկ՝ պիտի ազդէր, եւ լաւ ազդէր, իր վրայ, պիտի վերանորոգէր իր սպառելու մօտ քաջութիւնը: Խնդրեմ երկտող մը գրեցէք իրեն:

Կը յուսամ որ օգտուեցաք Ձեր ճամբորդութենէն՝ առողջական տեսակէտով. այլապէս՝ վանքին օգուտն ալ անշուշտ պիտի լսուի մօտերս...

Բարեւներ Հ. Եղիշէին<sup>91</sup> եւ Պ. Նուրեանին.

Ձերդ յարգանքով եւ սիրով  
Վահան Թէքէեան

13.

Նիկոսիա, 4 Դեկտ. 934

Սիրելի Սրբազան,

Եկայ վերջապէս: Առողջ եմ: Առ այժմ դժգոհ ալ չեմ: Նոյն իսկ, եթէ զօռ ընեմ, պիտի ըսեմ թէ գոհ եմ:

Եթէ կը հետաքրքրուիք, ըսեմ որ Պ. Կիրակոսեան<sup>92</sup> ըրաւ լաւագոյն ընդունելութիւնը, Ֆամակոսթայէն սկսեալ ուր եկած էր ընդ առաջ եւ շարունակելով մինչեւ այսօր, կանխաւ հոգացած եւ հոգալով հանգստաւէտութեան բոլոր կարելի միջոցները եւ աշխատելով մաքուր գործիս սկզբնաւորութիւնը դիւրացնելու: Ձեր շեշտովը եւ Ձեր տուած օծութեամբը բառին՝ շնորհակալ եմ:

Ի հարկէ, մինչեւ յարմարիլս քիչ մը՝ պիտի նեղուիմ. կեանքի հիմնական շրջումը Փարիզէն Կիպրոս եւ պանդոկէն վարժարան փոխադրութեամբ՝ պիտի ցնցէր ենթական՝ որ լաւ ենթակայ մըն ալ չէ միշտ բայց պիտի ջանայ ըլլալ:

Գահիրէի մէջ մէկի տեղ երկու շաբաթ անցուցի ստիպեալ. Առաջնորդարանէն ուր գացի երկու անգամ՝ Ձեր բացակայութիւնը տարօրինակ թուեցաւ ինծի. գիտնալով հանդերձ որ հոն չէք՝ սրահէն ներս բնագոյաբար Ձեզ կը փնտռէին աչքերս. հանդիպելով Մամբրէ Եպս.ին<sup>93</sup>, réaction<sup>94</sup> մը կ'ունենային ինչպէս ծանօթ ընդարձակ գրքի մը համառօտ եւ ժողովրդական տպագրութեան դիմաց:

Այսօր այսքան. օրհնեցէք ու զօրացուցէք զիս.

Ձերդ սիրով եւ յարգանքներով

Վահան Թէքէեան

14.

27 Դեկտ. 934

Նիկոսիա

Սիրելի Սրբազան,

Հաճեցէք ընդունիլ Նոր Տարիի եւ Ս. Ծննդեան առթիւ շնորհատրութիւններս եւ մաղթանքներս: Ինչպէս գիտէք, միշտ այսպէս մարդավարի եղած չեմ: Տեղոյն շնորհն է, կ'երեւայ:

Ուր օրէ ի վեր բաւական տկար եմ. աս ալ տեղին ապաշնորհութիւնը՝ հաւանօրէն. քիչ մըն ալ արդիւնք կեանքի եւ սնունդի փոփոխութեան: Բարեբախ-

տաբար երկու օրէն արձակուրդը կ'սկսի եւ կրնամ քիչ մը կարգ-կանոն դնել  
թէ՛ աշխատանքի ու կեանքի ձեւիս եւ թէ մտածումներուս մէջ:

Խորին յարգանքով եւ սիրով

Ձերդ

Վահան Թեքեան

15.

Մելգոնեան Կրթական Հաստատութիւն

Նիկոսիա (Կիպրոս)

18 Յունվ. 935

Ամենապատիւ Տ. Թորգոմ Արքեպս. Գուշակեան

Պատրիարք Ս. Երուսաղէմի

յԵրուսաղէմ

Սիրելի Սրբազան,

Յուզումով կարդացի միաբանութեանդ երեց անդամներէն Տ. Սմբատ Եպս.ի<sup>95</sup>  
վախճանման գոյժը: Բաւական հինէն կը ճանչնամ զինք. ժիր եւ գործունեայ  
եկեղեցական մըն էր. կարծեմ թէ իր գոյգ պատր[իարքական] փոխանորդու-  
թիւնները վարած է խղճմտութեամբ: Հաճեցէք ընդունիլ ցաւակցութիւնս հաս-  
տատութեանդ կրած այս դառնաղէտ կորուստին համար:

Շնորհակալութիւն Ձեր 2 Յնվ. թուակիր նամակին համար:

Տկարութեանս համար արդարեւ օգտուեցայ ծնունդի արձակուրդէն: Բարե-  
բախտաբար այդ արձակուրդները կան. հիմա կը հասկնամ թէ աշակերտնե-  
րէն աւելի՛ ուսուցիչներուն համար պէտք եւ նոյն իսկ անհրաժեշտ են անոնք.  
չեմ կարծեր որ ռեւէ վարչական պաշտօն այնքան սպառիչ ըլլայ որքան ու-  
սուցչականը. մտքի courbature<sup>96</sup> մը՝ որ կ'ստեղծուի կոր ուղեղ միշտ դէպի  
վար՝ նեղ միջոցի մը մէջ ծռելու ճիգէն: Ուրիշ հին եւ վարժ ուսուցիչներու հա-  
մար թերեւս ճիշդ չըլլայ ասիկա. ինձի՛ ճիշդ է, որովհետեւ այս երրորդ կամ  
չորրորդ անգամն է որ փորձը կ'սկսիմ 22 տարուան մէջ եւ հաւանօրէն ուշ է  
այլ եւս սպասել որ կորսուած ճկունութիւնս վերագտնեմ:

Օշականն նամակ մը առի եւ պատասխանեցի իսկոյն: Ուրեմն Նարդունիին<sup>97</sup>  
Հայ-Բոյժը<sup>98</sup>, լոյս չտեսած արդէն, բան մը բուժեր է եւ միայն ատոր համար  
իրեն երախտապարտ եմ. կէս-բժիշկ մը ոչ-բժիշկի մը ճամբան գոցած, արդար  
է: Ձգո՛յշ սակայն. եթէ գրագէտները, քաջալերուած մեր մէջ ամէն բան ընելու  
համար իրենց գտած թոյլտուութենէն, բժշկութիւն ալ պիտի ընեն, վաղը կրնան  
նաեւ կնունք, պատարագ եւ պատրիարքութիւն ալ ընել, ու այն ատե՞ն...  
անշուշտ Հայ-Բոյժի ծանուցումն առաջ տարիամոզած էիք մեր բարեկամը<sup>99</sup>  
եւ յորդորած որ գոհանայ իր tensionովը<sup>100</sup> միայն զբաղելով. tension artérielle,  
tension d'esprit եւ tension de style<sup>101</sup>... ասոնք՝ առանց դոյզն չարութեան,  
ընդհակառակն գորովով, բայց նորէն՝ չիմանա՛յ. *խ* կը տափակցնէ իր  
զանգուածին տակ, ինչպէս պիտի ըսէր Մալեգեան... առաջին բառը միայն:

Շահանին<sup>102</sup> 'Դաւիթ Անյաղթ'ը<sup>103</sup> հին ծրագիր մըն է կարծեմ. եթէ այդ 'Դաւի-  
թը իրօք «խելօք» միտք մըն է եւ ոչ թէ խելօք 'Դաւիթ մը միայն, կ'արժէ որ  
Շահանը քակէ զայն պատող լեզուի ցանցը եւ մեզի ճանչցնէ հնութեան մեր  
մեծագոյն իմաստասէրը, միեւնոյն ատեն ինքն ալ արժանանալով պատիւի եւ  
մրցանակի ('Բուրեան):

Իսկ շքեղ քերթուածներու զէք երկոտասնեակով մը Աստուածաշունչի թարգ-  
մանութեան յոբելեանին մասնակցելու<sup>104</sup> Ձեր հրաւերը Սիռնի բարձունքէն եւ

*մէջէն* չափազանց լուրջ է որպէսզի թեթեօրէն վերաբերուիմ անոր հանդէպ: Նամակը ստացած օրէս իսկ լծուած եմ գործի. երկոտասնեակին առաջինին առաջին չորս տողը գրուեցաւ իսկոյն բայց գրաբար Աստուածաշունչի մը պակասը Չեռքիս տակ՝ թափս կոտրեց: Եթէ կարենամ այդ կամ ուրիշ մը հասցնել ոչ թէ Փետրվարի այլ Մարտի թիւին համար՝ բարեբախտ պիտի ըլլամ. իսկ որպէսզի այդ մէկը յաջողներ ալ ունենայ՝ հրաշքի պէս բան մը պէտք է պատահի, ինչ որ յուսալի չէ այստեղ:

Պ. Կիրակոսեան ծրագիր մը ունի Չատկուան արձակուրդին Չեզի այցելելու՝ զիս ալ միասին քաշելով. եթէ հրաւերնիդ տաք ըլլայ չէ չըսեմ թերես: Ամբան «արձակուրդը» հաւանօրէն անցընեմ ... Հայաստան՝ ուրկէ ունիմ այդպիսի տաք հրաւեր մը, նոյն իսկ երկու հրաւեր<sup>105</sup>. տեսնենք ինչ կ'ըլլայ:

Ընդունեցէք, Սրբազան, խորին եւ սիրալիր յարգանքներս

Վահան Թէքէեան

Յ.Գ. (27 Յնվ.)

Այսօր վարժարանին մէջ ընդունեցինք Ե[րուսա]ղէմի անկլիքան Եպ[ի]ս[կոպոս]ը:

16.

Նիկոսիա, 22 Մարտ 935

Սիրելի Սրբազան,

Չեր 11 Փետր. թուակիրը շնորհակալութեամբ ստացած եմ ատենին:

Երուսաղէմէն մերժուած՝ պահ մը խորհեցայ իմ մասին Անթիլիաս ապաստանի յառաջիկայ Չատկին, քանի որ անպատճառ կրօնաբոյր մթնոլորտի մը պէտք ունենալ կը թուէր ջերմեռանդութիւնս այդ սուրբ օրերը անցընելու համար: Շահէ Ս., որուն գրած էի այդ փափաքս իր արքութիւնը շնորհատրող նամակիս ծայրը, ողջ ըլլայ, այսօր կը գրէ թէ խոժոռ դէմքերու պիտի չհանդիպիմ հոն: Այսուհանդերձ ճիշդ հիմա, Պ. Կիրակոսեանի հետ տեսակցել եւ լսելէ ետք թէ մեր զատկական արձակուրդը ութ օր է ընդ ամէնը, հրաժարեցայ այդ երջանիկ հեռապատկերէն՝ անոր վայելքը յետաձգելով ամբան, եթէ չերթամ Հայաստան, ուրկէ նոր լուր մը չունիմ դեռ:

Ուրիշ աղօտ ծրագիր մը՝ հետեւեալն է. իբրեւ ուխտատուր, ճրագալոյցի երեկոյին ներկայ ըլլալ Ս. Յարութեան տաճարը, հեռուէն տեսնել Չեզ, յաջորդ օրը այցելել Օշականին եւ Շահանին եւ երեկոյին վերադառնալ Կիպրոս՝ իմ քաղցրիկ բոյնս: Այս պարագային Վանքը գրկուած պիտի ըլլայ, սակայն, այն լիաբունն դարպասէն գոր պատրաստուած էի իրեն ընծայելու...

Միոնները այժմ սկսայ փնտռել եւ կարդալ: Խմբագրականներուն կը նախանձիմ կոր, 'Պողիկտոս'ին՝ պիտի նախանձիմ, երբ աւարտի: Օշականը դիւրած ըլլալ կ'երեւիք՝ այդքան շատ եւ մինչեւ իսկ քերթուած գրել տալու համար, ինչ որ դարձեալ նախանձս գրգռեց, բայց ի գուր, որովհետեւ հոս օղը բոլորովին հակաբանաստեղծական ըլլալ կը թուի՝ գոնէ ինծի համար: Ոչ իսկ քերթուածիկ մը՝ գալէս ի վեր: Աւելի չեմ արժեր արձակի համար: Չորութիւն քացարձակ:

«Տրտնջկոտութեանս կծիկը» չեմ քակեր, ինծի կը պահեմ եւ «տեղս ալ ծանր կը նստիմ» մինչեւ տարեշրջանին վերջը: Անկէ անդին չեմ խոստանար: Ընշումը արդէն կապարի չափ *ծանր* է վրաս: Պէտք է թեթեւնամ եւ ոչ թէ աւելի ծանրանամ: Երանի՛ ծանրացողաց...

Մեծ սիրով, խոր յարգանքով եւ Ս. Աջոյդ համբոյրով

Ձերդ  
Վահան Թեքեան

17.

Մելգոնեան Կրթական Հաստատութիւն

Նիկոսիա (Կիպրոս)

26 Ապրիլ 1935

Ամենապատիւ

Տ. Թորգոմ Արքեպս. Գուշակեան

Պատրիարք Ս. Երուսաղէմի

Երուսաղէմ

Սիրելի Սրբազան,

Թոյլ տուէք շնորհատրել Քրիստոսի Ս. Յարութեան տօնը եւ մաղթել որ շատ տարիներ մարմնի եւ սրտի հանգստութեամբ վարէք Ձեր բարձր պաշտօնը:

Հանեցէք ընդունիլ նաեւ ցաւակցութիւնս միաբանութեանդ երէց անդամներէն Մատթէոս Եպս.ի<sup>106</sup> ի Տէր հանգստեան առթիւ:

Ինչպէս գրած էի կանխաւ, վաղը՝ ճրագալոյցի երեկոյին, Ս. Յարութեան Տաճարին մէջ ներկայ պիտի ըլլամ... հոգով եւ պիտի տեսնեմ Ձեզ Ձեր պարտականութեան տեղոյն վրայ: Անթիլիասի պատմութիւնը հնարուած էր, ինչպէս ճիշդ գուշակած էք, Ձեզ նախանձաբեկ սրտմտութեամբ տոչորելու համար միայն...:

Մեր Ձատիկը անցաւ տխուր եւ խռով: Նախորդ օրը, նահատակաց օրուան հանդէտով, այսինքն նորէն սուգով վերջացաւ արձակուրդը: Երէկ վերսկսած էի դասերս, այսօր, անհանգիստ, սենեակս մնացի:

Խոր յարգանօք եւ սիրով մեծաւ ինչպէս միշտ

Ձերդ

Վահան Թեքեան

18.

Ամիանթօ (Կիպրոս) 2 Օգոստ. 935

Ամենապատիւ

Տ. Թորգոմ Ս. Պատրիարք Գուշակեան

Երուսաղէմ

Սիրելի Սրբազան,

Նազարէթի մէջ եւ շրջակայքը գեղեցիկ գիշեր մը եւ ցերեկ մը անցուցինք: Չորեքշաբթի երեկոյ ժամը 7ին նաւ մտանք. գիշերեցինք արտաքոյ անկողնոյ եւ առաւօտուն երբ կը մօտենայինք Կիպրոսի, զարմացմամբ տեսայ մեր կարգին ճամբորդներուն մէջ Շահէ Եպս.ը<sup>107</sup>: Ամիս մը Գերմանիա պիտի անցընէ Ամերիկա մեկնելէ առաջ: Խօսակցեցանք երկու ժամի չափ. Պ. Կիրակոսեանի հետ նոր կը ծանօթանար: Առողջութիւնը լաւ կը թուէր. բայց կը ծխէր բուխերիկի մը պէս:

Կրկին եւ ջերմ շնորհակալութիւններս Ձեր պատրիարքական եւ բարեկամական հիւրասիրութեան համար: Յարգանքներ սրբաշնորհ եւ հոգեշնորհ հայրերուն. բարեւներ Օշական եւ Շահան բարեկամաց[:]

Ձերդ խորին մեծարանօք եւ սիրով

Վահան Թեքեան

Յ.Գ. Այսօր անհանգիստ եմ. ստամոքսի եւ աղեաց ցաւ ու արիւնէրթութիւն. անկողնիս վրայ շտկուեցայ այս երկտողը ընկերացնելու համար Պ. Կիրակոսեանի նամակին:

19.

‘Արեւ’ Օրաթերթ

Քաղաքական եւ Գրական

Գահիրէ, 23 Դեկտ. 1935

Միւրեղի Սրբազան Պատրիարք Հայր,

Ներկայիս կը խնդրեմ որ հաճիք ‘Արեւ’ը՝ զոր այնքան ուրիշ առիթներով պատուած էք, պատուել անգամ մը եւս Նոր Տարիի թիւին համար գրութեամբ մը, ստորագրուած՝ եթէ կարելի է՝ Ձեր բուն անունով, եթէ ոչ՝ Նօտար ծածկանունով: Պիտի հրատարակենք բացառիկ թիւ մը, 6 կամ 8 էջ, ու *անհրաժեշտ է* որ ան Ձեզմով բացուի:

Երկրորդ խնդրանք մը. բարութիւնը ունեցէք – ներողամիտ ըլլալով եւ *ընելով* ձեւին համար – յանձնարարելու Օշականին եւ Շահանին որ մէկ-մէկ կարճ կամ միջին երկարութեամբ գրութիւն դրկեն վասն նոյն նպատակին: Վստահ եմ որ Ձեր բարձր ու հայրական միջամտութիւնը պիտի յաղթէ իրենց չկամութեան՝ եթէ ունին:

Եւ կը խնդրեմ, այս ամէնուն համար, որ ինձի հասնին ամենափոքր ուշացումով, *ամենամեծ արագութեամբ*: - Կանխապայտ խորին շնորհակալութիւն:

Մեծարանքով եւ սիրով

Ձերդ

Վահան Թէքէեան

Յ.Գ. Քանի որ «գրական» է նամակս, արդեօք Պ. Նուրեան Ձեզի ցուցուց ուտանաւոր մը, դրկուած Կիպրոսէն, «Մեռեալ ծով»ուն վրայ, թէ ոչ՝ իրեն ձօնած ըլլալու համար, համեստութիւնը չներեց ցոյց տալու, թէ ոչ՝ այնքան գէշ գտաք որ ինձի խնայելու համար չկարդացուցիք ուրիշներուն: Բայց արդեօք Պ. Նուրեան չստացա՞ւ զայն պարունակող շնորհակալութեան նամակս, բան մը՝ որուն համար պիտի ցաւէի իրօք:

20.

‘Արեւ’ Օրաթերթ

Քաղաքական եւ Գրական

Գահիրէ, 7 Յունվար 1936

Միւրեղի Սրբազան,

Նախ շնորհակալութիւն Ձեր Օրացոյցի քերթուածը արտատպելու արտօնութեան եւ նոյն Օրացոյցի նուէրին համար ինձի անձնապէս:

Յետոյ շնորհատրութիւններ եւ բարեմաղթութիւններ Նոր Տարիի եւ Ս. Ծննդեան առթիւ թէ՛ Ձեզի եւ թէ՛ Ձեր մեծ հաստատութեան. առողջութիւն Ձեզի ֆիզիքական եւ Վանքին նիւթական ու բարոյական:

Գալով քերթուածիկին որ Պ. Նուրեանի քով կը գտնուի՝ եթէ կը կարծէք որ կրնայ ‘Միոն’ի մէջ հրատարակուիլ հաճեցէք այդ պատիւը ընել անոր. ձօնագրութիւնը՝ ինչպէս որ կ’ուզէք:

Չըսէք որ փոսթաճիութիւն<sup>108</sup> ընել կուտամ, պարզապէս խնայողութիւն է որ կ’ընեմ խնդրելով որ ներփակ երկու քարդերը Օշականին ու Շահանին հասցնէք. շնորհակալութիւն նախորդ յանձնարարութեանցդ եւ այս յանձնումնե-

րուն համար.- ‘Արեւ’ի բացառիկը մեծ բան մը չեղաւ բայց այդքանն ալ ցաւե-  
րով ծնաւ...<sup>109</sup>

Ձերդ խոր յարգանքք եւ սիրով

Վահան Թէքէեան

Յ.Գ.- Ե[րուսա]լէմէն Ձեզի տրուած հանրագրութեան մը (168 ստորագրու-  
թեամբ) պատճէնը ստացայ այսօր՝ հրատարակութեան համար: Ս. Յակոբի  
մէջ անգլիացոց իրաւունքներ կուտաք եղեր...: Արդեօք անպատեհ կը գտնէ՞ք  
հրատարակութիւնը... իսկ լատինացման հա՞րցը. յարմա՞ր է հետապնդել մեր  
ըրած Ձեւով, կամ տարբեր կերպով, կամ բնաւ:

Նոյն

21.

Գահիրէ, 28 Դեկտ. 936

Սիրելի Սրբազան,

Կ’աճապարեմ Նոր Տարին եւ Ս. Ծնունդը Ձեզի շնորհատրելու եւ այդ առթիւ  
ուղղուած պատշաճ մաղթանքները սրտանց ուղղելու Ձեզի: Կ’աճապարեմ  
որպէսզի ուշ չմնամ, մտածելով՝ գէթ մէկ անգամի համար՝ թէ ուշանալէն  
լաւագոյն է կանխելը:

Ի՞նչ ըսիք ‘Արեւ’ի մէջ ‘Սիոն’ի վրայ<sup>110</sup> եւ անկէ առաջ Օշականի վրայ<sup>111</sup>  
երեւցած յօդուածներուն: Այդ ի՞նչ փոքի ցաւ կամ պոչի ցաւ է որ պատճառեք  
էք այդտեղ մէկուն՝ որպէսզի իր մէկ կամ միւս կողմը այդպէս գետին քսքսէ եւ  
այդքան ծիծաղելի ու արգահատելի դառնայ: Չանացէք ‘Կոչնակ’ի<sup>112</sup>  
«Բարձրութեան» հասցնել ‘Սիոն’ը՝ հետեւելով անոր օրինակին եւ տալով  
անոր կրօնաբարոյական յօդուածներուն նման «շինիչ» յօդուածներ, որոնցմէ  
‘Արեւ’ն ալ կուտայ յաճախ՝ Պատ[ուելի] Գոնսիպեանի ստորագրութեամբ...:  
Չմոռնաք նաեւ ‘Բազմավէպ’ը<sup>113</sup>, իբրեւ հաւաքավայր «պատրաստուած»,  
«մասնագէտ» վարդապետներու մտքի արտայայտութիւններուն...:

Գահիրէ իր ընտրութիւնները կատարեց<sup>114</sup>: Ինչպէս նշմարեցիք՝ ես *մէկ* քուէ  
անգամ չստացայ: Արդէն ընտրող ալ չէի՝ որովհետեւ ոչ ոք դիմում ըրաւ ինձի  
ազգ. տուրք գանձելու համար եւ Քաղ. Ժողովը մտքէն չանցուց վճարեալ կամ  
անվճար *carte d’électeur*<sup>115</sup> մը դրկել անո՞ր որ Եզիպտոսի ազգ. երեսփոխանը,  
կաթող[իկոսական] ընտրութեան եւ ազգ[ային] Համագումարի անոր  
պատուիրակը, Քաղ[աքական] Ժողովի ատենապետը եւ հեղինակի,  
խմբագրապետի ու դպրոցի տնօրէնի պէս կարգ մը ուրիշ աննշան բաներ  
եղած է ... Չէ՞ք ըսեր կեցցէ՛ հայութիւնը: Մեր մէջ քիչ մը յարգանքի  
հանդիպելու համար պէ՞տք է անպատճառ բժիշկ կամ փաստաբան ըլլալ:

Խորին յարգանքով եւ սիրով

Ձերդ Վահան Թէքէեան

Յ.Գ. Խեղճ Տամատը թէեւ քիչ մը ատելի լաւ է ֆիզիքապէս բայց կը տառապի՝  
ջանալով ծածկել քովիններէն իր կրած տառապանքը: Եթէ կազդուրիչ եւ  
զուարթացուցիչ քանի մը տող գրէք՝ բարիք մը ըրած կ’ըլլաք իրեն:

Նոյն

22.

‘Արեւ’ Օրաթերթ

Քաղաքական եւ Գրական

Գահիրէ, 3 Մարտ 1937

Սիրելի Սրբազան,

Շատ մեծ ցատով լսեցի Ձեր երկու նամակներէն Օշականի հիւանդութիւնը: Առաջինին վերջին տողերուն թողած յուսալից տպաւորութիւնը դժբախտաբար փճացուց երկրորդը: Միթէ *angine de poitrine*<sup>116</sup> է իրօք եւ ոչ *fausse angine*<sup>117</sup>, չի ներեր, քիչ ատենէն մէկ կամ անելի անգամ կը կրկնուի եւ կը տանի: Ատոր նախազգացումը ունէր ինք Կիպրոսէն՝ երբ ինծի կը գրէր Բարիզ իր *tension*ին թիւերը ու կը խնդրէր լաւ բժիշկներու կարծիքը: Հակառակ ատոր՝ չարաչար աշխատեցաւ անկէ ի վեր, «տալու» մարմնաջով մը, որուն դէմ քանիցս զգուշացուցած եմ զինքը: Երանի՜ թէ *fausse angine* ըլլար ունեցածը, ինչպէս Տիրան Պէլլէրեանինը<sup>118</sup>, որ 5-6 տարիէ ի վեր սրտի ցաւեր ունի եւ երբեմն տագնապներ կ'ունենայ, բայց բժիշկները ի վերջոյ ապահովցուցին զինք *fausse angine*ի *diagnostic*ով<sup>119</sup>: Երէկ պիտի գրէի Օշականին՝ բայց այսօր Ձեր նոր նամակը կարդալէ ետք չեմ գրէր՝ խորհելով թէ կրնայ ընթերցումը եւ յուզումը վնասել իրեն. եթէ այդպէս չէ՝ հաճեցէք իմացնել:

Անցած ըլլայ Ձեզի: Ես ալ այս ձմեռ բաւական նեղուեցայ եւ դեռ կը նեղուիմ սաստկացած հագովս (հարբուխի հետեւանք) եւ երեսի քերուրտուքով՝ որ անցնելու միտք չունի անցեալ ամառէն ի վեր:

Հակառակ Ձեր «արգելք»ին կը ներփակեմ ոտանաւոր մը<sup>120</sup>. Եթէ յարմար է կուտաք 'Միոն'ին, եթէ ոչ՝ պատռեցէք. ատկէ ուրիշ բան մը չունիմ Ձեզի յարմարող:

Շնորհակալութիւն եւ խորին յարգանք ու սէր «վեթերան»էն<sup>121</sup>,

Վահան Թէքէեան

Այս ոտանաւորը 1925էն ի վեր շատ անգամներ ձեռք առած ու միշտ մէկդի դրած եմ՝ իբրեւ շատ «ընտանեկան». հիմա ալ խիղճս հանդարտ չէ բայց ստիպեցիք. մեղքը Ձեր ճիտը...:

23.

Գահիրէ, 21 Յուլիս 937

Միրելի Սրբազան,

Ստացայ Ձեր 10 Յուլիս թուակիրը. կ'երեւայ քիչ մը ուշ, որովհետեւ չորս օր առաջ միայն ձեռքս հասաւ:

Մահարձանի խնդրոյն համար յայտնեցի Ձեր գրածը ժողովին՝ որ երէկ իրիկուն կը գումարուէր: Տեսան որ ձեռնարկը 'Արեւ'ի կողմէ կատարուած է (այն ատեն ես հոս չէի) որով յանձնարարեցին ինծի խնդրել Ձեր Սրբազնութենէն, որպէսզի հաճիք Ձեզի եղած դիմումը պաշտօնապէս հաղորդել 'Արեւ'ի վարչութեան, ըստ այնմ այս վերջնոյն դրական պատասխանին համաձայն Ձեր կողմէ տալու համար պէտք եղած արտօնութիւնը տեղույդ նախկին լէզեռնականներու միութեան: Այս պաշտօնականութիւնը անհրաժեշտ էր՝ յառաջիկային ունէլ անախորժ ու սրբապիղծ վէճերու տեղի չտալու համար:

Խորապէս շնորհակալ եմ այս ամառ Ձեզի հիւր ըլլալու Ձեր ուղղած հրաւերին համար: Դժբախտաբար սակայն պիտի չկրնամ ընդունիլ՝ արդէն պատրաստուած ըլլալով քանի մը օրէն Լիբանան մեկնիլ՝ ուր պիտի աշխատիմ նոյնքան ժամանակ (2 ամիս) նոր հրատարակուելիք օրաթերթ 'Չարթօնք'ին<sup>122</sup>, վախճալով հանդերձ որ կրնամ չտոկալ, Պէյրութի սոսկալի տաքին մէջ, նոր գործի մը պահանջած ծանր յոգնութեան: Ըսին թէ պարտականութիւնս է ատիկա ընել. ընդունեցի՝ մասնաւորապէս օգնելու համար անցեալ ամառ Լիբանանի մէջ ճանչցած ու խրախուսած երիտասարդներու:

Օշականին մասին Ձեր տուած լուրը ուրախացուց զիս: Կը հաճի՞ք ներփակ երկտողը իրեն յանձնել եթէ մեկնած չէ դեռ եւ եթէ արդէն մեկնած է՝ յառաջիկային Ձեր նամակին մէջ դնելով իրեն դրկել:

Երեք թէ չորս ամիս առաջ, Ձեր նամակին պատասխանած էի՝ ‘Սիոն’ի համար ոտանաւորով մը միասին<sup>123</sup>: Հոգ չէ որ ոտանաւորը յարմար նկատած չըլլաք հրատարակել, կը յուսամ միայն որ ստացաք նամակս. այլապէս ետ պիտի գար ան եւ չէ եկած:

Շահանին բարեւներ. Ձերդ սիրով եւ յարգանքով

Վահան Թէքէեան

24.

‘Արեւ’ Օրաթերթ

Քաղաքական եւ Գրական

Գահիրէ, 8 Նոյ. 1937

Սիրելի Սրբազան,

Պէյրութի մէջ ստացած էի Ձեր նամակը: Վերջին շաբաթը ամբողջ հիւանդ պառկելէ վերջ՝ ստիպուեցայ նոյն վիճակին մէջ մեկնիլ որովհետեւ *visa*ս եւ տոմսակիս պայմանաժամը կը լրանար. հոս ալ շաբաթէ մը ի վեր տկար էի. այսօր աւելի լաւ եմ. կը ցաւիմ որ չկրցայ Երուսաղէմ հանդիպիլ:

Մեր ընկերն ու բարեկամը՝ Ամերիկայէն եկած Պ. Գասպար Մովսէսեան<sup>124</sup>, քանի մը օրէն Սուրիա պիտի այցելէ, անցնելով Պաղեստինէն եւ Երուսաղէմ 2-3 օր մնալով: Ինք ամերիկահպատակ է. երբ այսօր անգլ[իական] հիւպատոսարանը *visa* տուած է Պաղեստինի համար, Պ. Մովսէսեան, ի պատասխան այն հարցին թէ ի՞նչ պիտի ըլլայ իր հասցէն Երուսաղէմի մէջ, տուած է վանքիդ անունը: Ինձմէ խնդրեց որ այս պարագան Ձեզ հաղորդեմ՝ խնդրելով նաեւ որ հաճիք, ռեւէ հարցման առթիւ, պէտք եղածը պատասխանել: Ես զինք կը ճանչնամ Պոլսէն, եւ նպատաւոր կերպով. ինչպէս ըսին, հող պիտի մնայ միայն 2-3 օր եւ ուրիշ բան պիտի չընէ բայց եթէ Ս. Տեղերը այցելել:

Պէյրութի մէջ ալ ինձմէ խնդրուած էր Ձեզի յանձնարարել Պ. Յ. Ապանեանը (անունը այս է կարծեմ), շրջանաւարտ Ամերիկեան Համալսարանէն եւ այժմ Երուսաղէմի մէջ անգլ. վարժարանի մը ուսուցիչ: Այս յանձնարարութիւնը ներկայացում մըն է միայն. կ’ուզէ որ երբ Ձեզի այցելէ՝ զինք օտար չհամարէք բոլորովին:

Մաղթանքներ Ձեր կացութեան բարելաւումին համար: Խոր յարգանքօք եւ սիրով

Վահան Թէքէեան

25.

‘Արեւ’ Օրաթերթ

Քաղաքական եւ Գրական

Գահիրէ, 24.12. 1937

Սիրելի Սրբազան,

Խոր ցաւով կարդացի, ‘Յուսաբեր’ի մէջ եւ ոչ ‘Արեւ’ի, Ձեր անցուցած արկածը: Անցուցած կ’ըսեմ, հաւատալով որ վախն ու ցաւը անցած են եւ հետեւանքն ու պատճառած անհանգստութիւնն ալ պիտի անցնին շուտով, այսինքն իրենց ատենին: Ի՞նչ գործ ունէիք Երիթով. պարիսպները վաղուց ինկած չե՞ն արդէն. Տապանակը հո՞ն է միշտ՝ որ այս վտանգալից օրերուն գացեր էք

այնտեղ եւ փորձանք փնտռեր...: Եղածը եղած է սակայն, կը մնայ համբերութիւն, համբերութիւն եւ նորէ՛ն համբերութիւն ունենայ, որպէս հակա-Տանթոն<sup>125</sup>, որպէս հայ եւ որպէս եկեղեցական...: Եթէ դուք չէք կրնար՝ պիտի խնդրէի որ հրահանգ տայիք մէկուն ինծի յայտնել թէ ի՛նչպէս էք հիմա եւ ի՛նչ է իրական վիճակը ոտքին.- կը հարցնեմ մանաւանդ մտածելով Ձեր «շաքար»ին, որուն վրայ կը յուսամ որ ռեւէ ազդեցութիւն չ'ըներ այս արկածը: Բարեւներ Օշականին եւ Շահանին. Օշականէն նամակի մը առնելիքը ունիմ. ի՞նչպէս վերադարձաւ Բարիզէն, շիքցա՞ծ<sup>126</sup>, փոխուա՞ծ արդեօք...:  
Ընդունեցէք նոր տոմարով Նոր Տարիի մաղթանքներս  
Ձերդ սիրով եւ յարգանքով  
Վահան Թէքէեան

26.

‘Արեւ’ Օրաթերթ

Քաղաքական եւ Գրական  
Գահիրէ, 4 Փետրուար 1938

Սիրելի Սրբազան,

Թէեւ նոր լուր մը չունիմք բայց կը յուսամ որ Ձեր ապաքինումը անխափան կը շարունակէ: Հիւանդանո՞ցն էք միշտ թէ վանք վերադարձած էք, այդ ալ չեմ գիտեր: Հարկաւ ցաւ չունիք սակայն եւ կրնաք կարողալ կամ գրել նոյն իսկ, արձակ կամ ոտանաւոր, յօդուած կամ գիրք: Եթէ այո՛ւ ատոնք պիտի ըլլան Ձեր ոտքին ձեռագիրները...:

Այստեղ Պատ[ուելի] Գօնսիւեան մը կայ, գոր կը ճանչնաք հաւանօրէն իր ‘Արեւ’ի գրութիւններէն: 8-10 ամիսէ ի վեր, արդէն, հրաժարած է եղեր իր պաշտօնէն՝ իր կէս-համայնքին անկարութեան պատճառաւ, եւ դիմեր է Առաջնորդարան՝ փափաք յայտնելով քահանայ ձեռնադրուելու: Իրմէ ալ, դուրսէն ալ լսեցի որ Քաղ[աքական] Ժողովը, մասնաւորաբար Պ. Սէֆերեան, համակիր գտնուեր են զաղափարին եւ ինք յուսադրուեր է: Բայց հակառակեր են, ու մինչեւ հիմա կը հակառակին եղեր Մամբրէ Եպս. եւ քահանաները, ուրիշ խօսքով՝ Կրօն[ական] Ժողովը: Պ. Գօնսիւեան (որ այլ եւս պատ[ուելի] չի ստորագրեր) ասկէ առաջ անգամ մը խնդրեց ինձմէ, յետոյ ետ առաւ խնդրանքը, հիմա նորէն կը խնդրէ՝ որ գործը Ձեզի յայտնեմ, որպէսզի, եթէ կը հաճիք, միջամտութիւն մը ընէք Մամբրէ Եպս.ին մօտ ու ընդունուի դիմումը: Կայ նաեւ սա պարագան, որ Պ. Գօնսիւեան, ամսէ ամիս սպասելով պատասխանի եւ քարոզչական պաշտօնի համար ուրիշ տեղեր դիմում չընելով՝ մնացած է նիւթական շատ նեղ վիճակի մէջ, իր կնոջ եւ երկու զաւակներուն հետ որոնք «անսուաղութեան մատնուած են» կ’ըսէ եւ կ’ըսէ թէ շուարած է ընելիքին մասին:

Արդ, ես ըրի ընելիքս. ուրախ պիտի ըլլայի լսելով Ձեր դատաստանն ու իրեն տալիք պատասխանս:

Ձերդ սիրով եւ մեծարանքով

Վահան Թէքէեան

27.

‘Արեւ’ Օրաթերթ

Քաղաքական եւ Գրական  
Գահիրէ, 9 Փետրվար 1938

Սիրելի Սրբազան,

Անմիջապես կը պատասխանեն հիմա ստացուած Ձեր նամակին, նախ վեցօրեայ – նամակի ստացումէն վերջ աղչափ միայն կը մնայ – գաճ(աճ) համբերութիւն մը եւս մաղթելու եւ յետոյ Գօնսիւլեանին մասին Ձեր գրածին կատարելապէս համոզուած ըլլալս յայտնելու համար:

Հիմա պիտի ըսէք թէ ի՞նչ փոփոխամտութիւն է սա Թէքէեանինը, հազիւ քանի մը օրուան ընթացքին...: Բայց Ձեր յոգնեցուցիչ (Ձեզի համար) բացատրութիւններէն առաջ արդէն, եւ ինքս տաք չէի կրօնական պաշտօնեայի մը շապիկ փոխելու պէս եկեղեցի փոխելու այդ առաջարկին՝ նկատելով մանաւանդ անոր սննդական պատճառը: Միւս կողմէ, թեկնածուին «գարգացած» ըլլալը բնաւ imposer չէր ընէր ինծի<sup>127</sup>, դատելով իր ‘Արեւ’ի յօդուածներէն եւ հրապարակային խօսքերէն: Իսկ իր կողմէ այդ «գարգացումը» մէջբերելով՝ «Մամբրէ Եպս.ը եւ քահանաները չեն ուզեր կոր որովհետեւ կը վախճան թէ շուք կը ձգեն իրենց վրայ» խօսքը գոր քանիցս կրկնեց, ամենագէշ տպաւորութիւն ըրաւ վրաս ու կարծեմ յիշած էի զայն Ձեզի, դիտմամբ, որպէսզի ճանչնաք անձը:

Նոյնքան գէշ տպաւորուեցայ ինծի գրած վերջին նամակին այն բառերէն՝ թէ յոյս տուեր են իրեն եւ հիմա *անօթի մնացած է* որովհետեւ այդ յոյսին վրայ հիմնուելով ուրիշ քարոզչական պաշտօն չէ փնտռած, որով ... պէտք է *coûte que coûte*<sup>128</sup> հայ եկեղեցիէն ներս մտնէ իբրեւ քահանայ: Չեռնադրութեան մասին չէ խօսած կամ գրած ինծի, իրաւամբ անձեռնհաս նկատելով զիս այդ մասին, երբ կ’երեւայ թէ ինքն ալ ինձմէ աւելի *versé*<sup>129</sup> չէ եղեր հարցին մէջ: Կայ միայն կէտ մը. սա՛ թէ Ձեզի գրելէս վերջ մէկը հաւաստեց ինծի, որ Մամբրէ Եպս. համամիտ է եղեր զինք ընդունելու, այդպէս ըսեր է, եւ քահանաներն են եղեր միայն հակառակողները: Ասիկա անշուշտ սխալ է, բայց պէտք էր սկիզբէն կտրուկ ըլլալ, յոյս չներշնչել իրեն, Ձեզի գրել աւելի կանուխ եւ հաղորդել իրեն Ձեր պատասխանը: Կը թուի թէ մարդը առաւելապէս զոհն է անտանելի Գարեանին, որ մէկ կողմէ՝ իրեն հաւ[ա]տացուցած է թէ հայ եկեղեցին պէտք ունի իրեն եւ գրկաբաց պիտի ընդունի զինք, ու միւս կողմէ՝ աս ու ան տեսնելով անոնց քաղաքավար խօսքերը իբրեւ հնչուն դրամ առած ու անցուցած է պատուելիին: Այսուհանդերձ, իրաւունք ունի այս վերջինը երբ իր եւ իւրայնոց «անտուադութեան» պատասխանատու կը բռնէ մերինները, բան մը որուն առջեւ չենք կրնար մարդկօրէն անտարբեր մնալ:

Երկար գրեցի՝ Ձեզի ընթերցման նիւթ հայթայթելով տաղտուկնիդ փարատելու համար առաւելապէս, դրդուած Ձեր նամակէն: *A propos*<sup>130</sup>, Էօժէն Բաբազեանի<sup>131</sup> գոքանչ-մայրը՝ Տիկ. Մսիրեան, անցեալ շաբթու ինկած է Ձեզի պէս եւ սրունքը՝ վերէն, կտորած: Բժիշկը ըսեր է որ տեղին եւ յառաջացած տարիքին պատճառաւ կարելի չէ բան մը ընել. անընդհատ կը պոռայ եղեր ցաւէն. կը տեսնէք որ մխիթարութեան մեծ պատճառ ունիք դուք:

Ձերդ մեծաւ սիրով եւ յարգանքօք

Վահան Թէքէեան

Յ.Գ. Այս նամակը գրելէս վերջ տեսայ որ ‘Արեւ’ի այսօրուան խմբագրականը Գօնսիւլեանի պաշտպանութիւնը կ’ընէ հազիւ քօղարկուած ձեռով եւ մեզի համար շատ անախորժ եղանակաւ մը<sup>132</sup>: Դժբախտաբար եղածը եղած է. մեղք որ նամակնիդ օր մը առաջ չհասաւ:

‘Արեւ’ Օրաթերթ

Քաղաքական եւ Գրական

Գահիրէ, 13 Ապրիլ 1938

Սիրելի Սրբազան,

Երկու պարտականութիւն, իրարու ներհակ, միասին կը կատարեն:

Նախ կը խնդակցին Ձեզի՝ Ձեր բուժման եւ հիւանդանոցէն ելքին առիթով: Կը յուսամ որ մնացեալ անուժութիւնն ալ շուտով կ’անցնի եւ կրնաք ըստ առաջնոյն զբաղիլ Ձեր ամէն կարգի աշխատութիւններով, որոնց մէջ նստիլ-ելլելը, երթալ-գալը իրենց անհրաժեշտ տեղը ունին եւ պիտանի են առողջութեան համար:

Յետոյ կը ցաւակցին Վեհ. Տ. Խորէն Կաթողիկոսի<sup>133</sup> հանգստեան առթիւ: Ես եւս մեծ ցաւ զգացի թէ՛ անձնապէս ծանօթ ըլլալուս պատճառաւ եւ թէ մտածելով ապագային: Կը մաղթեմ որ յաջորդութիւնը ամենաքիչ վնասով ապահովուի՝ Աթոռին եւ ազգին համար:

Ներփակը կը խնդրեմ որ հաճիք Շահանին յանձնել. շատ-շատոնց է որ լուր չունին ոչ իրմէ եւ ոչ Օշականէն. միմակ են. ջանք մըն է ասիկա խօսելու, ուրիշ ոչինչ:

Գրական հանդէսին գործը նոր դժուարութեան մը հանդիպեցաւ. մագ կը մնայ որ վերջնականապէս ետ քաշուի<sup>134</sup>:

Ձերդ սիրով եւ յարգանքով

Վահան Թէքէեան

Յ.Գ. Հաննէեանը<sup>135</sup> որ հոս էր քիչ առաջ եւ ուզեց գիտնալ թէ ո՞րի կը գրեմ, խնդրեց որ իր որդիական խորին յարգանքները յիշեմ Ձեզի:

‘Արեւ’ Օրաթերթ

Քաղաքական եւ Գրական

Գահիրէ, 2 Յունիս<sup>136</sup> 1938

Սիրելի Սրբազան,

Այսօր առի Ձեր 30 Յունիս բուակիրը եւ կը փութամ պատասխանել:

Ամերիկայի Սամուէլ Յ. Թումայեանը<sup>137</sup> տեղոյն (Նիւ Եորք) Թումայեան լաւ քահանային որդին է, ‘Պայքար’ի աշխատակից եւ ‘Արեւ’ի թղթակից, կարծեմ դեռ բաւական երիտասարդ՝ որ սակայն արագօրէն հասուննալու վրայ է: Ես ալ ստացայ իր հրատարակելիք ‘Ամերիկա[հա]յ Տարեցոյց’ին<sup>138</sup> համար աշխատակցութեան հրաւեր մը քանի մը օր առաջ:

Գալով Ձեր «խորհրդապահօրէն» գրածին՝ կ’երեւայ պէտք զգացած էք այդ խորհուրդը տալ ‘Յուսաբեր’ի վերջին խմբագրականները կարդալով: Եթէ պատասխանեմ իսկ անոնց՝ պէտք չունիմ հարկաւ մարդը փառաբանելու ու պիտի չընէի ատիկա: Ի՞նչ տեսակ են, սակայն, իր մեղքերը. քաղաքակա՞ն թէ ... թեթեւական. ահա՛ թէ ի՞նչ զիս կը հետաքրքրէ ու պիտի խնդրէի որ այդ մասին զիս քիչ մը լուսաբանէք:

Առողջ ... չեմ դժբախտաբար. հազիս վրայ աւելցաւ նաեւ այս տարի էքզէմ<sup>139</sup> մը ականջիս (հիմա միւսին ալ) ետին, որ նաեւ մէջը անցնելու վրայ է. ունէի արդէն երեսիս եւ զլխուս քերուրտութիւն՝ Բարիզի *զօնայ*էն մնացած, որուն

կարծես հետեւանքն է էրզւման. շատ կը նեղէ՝ մանաւանդ այս տաքին եւ աշխատանքին մէջ:

Գուք լաւ էք յուսամ. երկոտանի՞ նորէն՝ թէ եռոտանի տակաւին. խռովութիւնները մտահոգիչ են<sup>140</sup>. թերթերը կարդալով կը մտածեմ միշտ մերոնց ու ձերոնց որ քաղաքէն կ'անցնին կը դառնան. Շահանն ու Օշականը ո՞ր կը բնակին արդեօք. ո՞ր է Շահանին ընտանիքը. Օշականին առողջութիւնը իրա՞ւ սպառնալից է՝ ինչպէս ինք կը գրէր՝ թէ իր ծանօթ վախկոտութիւնն է միայն:

Միրով եւ յարգանքով

Վահան Թէքէեան

30.

Գահիրէ 6 Օգոստոս 938

Միրելի Սրբազան,

Կը յուսամ որ առողջութիւննիդ լաւ է միշտ եւ շատ չէք ազդուիր տեռռիզմի դէպքերէն: Առջի օր Տամատին առջեւ ըսի եւ գղջացի՝ որ մեր ամբողջ յեղափոխական գործի շրջանը որով կը պարծենանք, Պաղեստինի մէկ շաբաթը չ'արժեր: Դիշդ է սակայն:

Այս երկտողը կը գրեմ՝ Չեզի յայտնելու համար որ յառաջիկայ ձմեռ որոշած ենք Տամատին յորելեանը տօնել. ատոր համար գրքոյկ մը պիտի հրատարակենք նախապէս, իսկ գրքոյկին համար խորհեցանք որ դուք իր կենսագրութիւնը առած էք ժամանակին, որ կրնայ շատ օգտակար ըլլալ գրուելիքին<sup>141</sup>: Խեղճ Տամատը շատ պիտի յոգնէր եւ պիտի չկրնար, արդէն, նոյնը եթէ ուզէինք նորէն պատմել տալ այսօր: Խնդրեմ, կը հաճի՞ք ըսել թէ ո՞ր է այդ կենսագրութիւնը, հո՞ս թէ հող. եթէ հոս է՝ թերեւս կրնանք առնել առաջնորդարանէն, առանց Չեզի յոգնութիւն տալու. եթէ հող է՝ կրնա՞ք ընդօրինակել տալ եւ դրկել ինծի: Կանխաւ մեծ շնորհակալութիւն:

Միշտ սիրալիր բարեւներ բարեկամ հարց եւ տխարց

Ձերդ խորին յարգանքով եւ սիրով

Վահան Թէքէեան

Յ.Գ. Ահաւասիկ, 'Միոն'ին համար, Պոտըլեռէն<sup>142</sup> քարգմանութիւն մը<sup>143</sup>, իբրեւ բերան-փոխ ժան էքառի<sup>144</sup>...

ԾԱՆՕԹԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

<sup>1</sup> *Մամուլի Մէջ Տպուած Եւ Անտիպ Երկեր Եւ Նամակներ Վահան Թէքէեանէն*, Պէյրութ, 1987, էջ 246-247:

<sup>2</sup> Վահան Թէքէեան, *Ամբողջական Երկեր*, Հտր. 3, Գահիրէ, 1949, էջ 41:

<sup>3</sup> Եգիպտոսի Հայոց Առաջնորդ Թորգոմ Արք. Գուշակեան Երուսաղէմի Հայոց Պատրիարքական Աթոռը ստանձնելու համար Երուսաղէմ կը ժամանէ 26 Նոյեմբեր 1931ին: Իր պաշտօնը կը հաստատուի Պաղեստինի մէջ անգլիացի Բարձր Զոմիսէր Սըր Արքըր Կրինֆիլտ Ուոքըրի պաշտօնատան մէջ ընթերցումովը ճորճ Ե. Բագատրին հաստատագրին, 1 Դեկտեմբեր 1931ին:

<sup>4</sup> Ամէն բան լաւ է, երբ լաւ կ'աւարտի (ֆրնս.):

<sup>5</sup> ... Երբ լաւ կը սկսի (ֆրնս.):

<sup>6</sup> Հաւանաբար կապ մը կայ յիշատակեալ տիկնոջ եւ Տիրան Իսկիկեանի միջեւ: Տիրան Իսկիկեան՝ բանաստեղծ եւ արձակագիր Լեւոն Չաւէն Միրմէլեանի դասընկերը, Չմիւռնիոյ պարպումին հետեւանքով տարուած էր Գորֆուի որբանոցը եւ հովանաւորեալն էր Թէքէեանի: Թէքէեան անոր հետ ունեցած է նամակագրական

- կապ եւ զայն նկատած է «գրական շատ լաւ խմոր մը» (*Միրակարօւ չնոյններ, Լեւոն Չաւեն Միրմէլեանին եւ Վահան Թէքէեանին Փոխանակած Նամակները*, խմբագրեց եւ ծանօթագրեց Դոկտ. Վաչէ Դազարեան, հրատարակութիւն Կարպիս Լ. Նազարեան Հիմնադրամի, Ուոլթհէմ, 1998, էջ 38):
- <sup>7</sup> Փրոֆ. Սանճեանի հրատարակած մամակներէն կը պարզուի թէ Վահան Թէքէեան սկսած է բժշկական խնամքի ենթարկուիլ գէթ 1932ի Յուլիսէն՝ աչքի հիւանդութեան եւ առողջական այլ խնդիրներու բերումով: Հետեւեալը՝ ակնարկութիւնը աչքակապին:
- <sup>8</sup> *Ընդարձակ Տարեցոյց Ազգային Հիւանդանոցի*: «Անտառին Աստուածամայրը» բանաստեղծութիւնը հրատարակուած է *Տարեցոյցին* 1933 տարուան 15-16րդ էջերով:
- <sup>9</sup> Մեսրոպ Արք. Նարոյեան (1875-1944)՝ որ եղած է Արմաշի Դպրեվանքին վերջին տեսուչը, Թուրքիոյ Հայոց Պատրիարք ընտրուած էր 1927ին:
- <sup>10</sup> Գահիրէ, այն վայրը, ուր կը գտնուէր Ազգային Առաջնորդարանը:
- <sup>11</sup> Գահիրէի Գալուստեան Ազգային Վարժարանի 1925ի շրջանաւարտներէն, որ յետագային հաստատուած է Փարիզ:
- <sup>12</sup> Ռամկավար Ազատական Կուսակցութեան (ՌԱԿ) Եգիպտոսի պաշտօնաթերթը, որ հրատարակուիլ սկսած էր 1915ին, Թէքէեանն ունենալով իբրեւ հիմնադիր-խմբագիր:
- <sup>13</sup> Տենդ եւ գլխացաւ պատճառով բշտիկաւոր ցանով մաշկաբորբ: Թէքէեանի յետ մահու հրատարակուած չափածոյ գործերուն մէջ կայ «Ձօնա» խորագրով երեք վեցական տողանոց տուներէ բաղկացած փորձ մը, որ կը պատկերէ հիւանդութեան հետեւանքները.- ցաւ՝ սաստիկ լոյսէն, աղմուկ՝ գլխուն մէջ, հակառակ անկէ դուրս տարածուող լուսեան, դիմային տեսք մը՝ որ սարսափ կը պատճառէ զինք այդ վիճակին մէջ տեսնող մանուկներու:
- <sup>14</sup> Օննիկ եւ Շահան Պէրպէրեան եղբայրները 1924ին Գահիրէի մէջ կեանքի կը կոչեն իրենց հօր՝ Ռեթէոս Պէրպէրեանի՝ 1876ին Պոլիս հիմնած Պէրպէրեան Վարժարանին համանուն նոր վարժարան մը, որ 1932ին կ'անցնի Թորգոմ Արք. Գուշակեանի պատուակալ նախագահութեամբ կազմուած նոր խնամակալական մարմնի մը հովանիին ներքեւ՝ ապահովելու համար վարժարանին գոյատեւումը, Պէրպէրեան եղբայրները պահելով տնօրէնի իրենց պաշտօնին վրայ:
- <sup>15</sup> Պօղոս Նուպար՝ հիմնադիրը Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութեան (ՀԲԸՄ), ընդառաջելով Եգիպտոսի Հայոց Առաջնորդ Թորգոմ Արք. Գուշակեանի կոչին, Հելիոպոլիս արուարձանին մէջ 1924ին հոգացած էր կառուցումը Նուպարեան Ազգային Վարժարանին: 1932-33՝ տեսչական մարմին մը վարած է դպրոցին վարչական գործերը, իսկ 1933-34ին տեսչութիւնը վստահուած է Յովսէփ Գույումճեանի, որ նախապէս, 1911էն տնօրէնն էր ՀԲԸՄ Վանի Վարժապետանոցին, երբ վրայ կը հասնէր Վանի հերոսական ինքնապաշտպանութիւնը:
- <sup>16</sup> Նախ Հայ Ռամկավար Կուսակցութեան եւ ապա ՌԱԿի Փարիզ հրատարակուող պաշտօնաթերթը (1920-1950, ընդմիջումով):
- <sup>17</sup> 19 Մարտ 1933ին Անթիլիասի ընծայարանին մէջ Շահէ Եպսկ. Գասպարեանի նախագահութեամբ տեղի ունեցած է Թէքէեանին նուիրուած գրական երեկոյթ մը, որուն ընթացքին Սարգիս Ապտալեան ներկայացուցած է բանաստեղծ Թէքէեանը: Շահէ Եպսկ. իր փակման խօսքին մէջ արտայայտուած է Թէքէեանի բարութեան եւ համեստութեան մասին:
- <sup>18</sup> Շահէ Եպսկ. Գասպարեան (1882-1935)՝ տարիներով Պոսթոնի մէջ, Մ. Նահանգներ, հովուութիւն կատարելէ ետք, Սահակ Ա. Կաթողիկոս Խապայեանի կողմէ 1930ին հրաւիրուած էր պաշտօնավարելու Անթիլիասի նորահաստատ դպրեվանքին մէջ: Մինչ այդ տակաւին ծայրագոյն վարդապետ, եպիսկոպոս ձեռնադրուած էր 1931 Մայիս 24ին: Այդ առիթով Գուշակեան Պատրիարք յատկապէս Երուսաղէմէն Անթիլիաս գացած էր որպէս ուսուցիչը Շահէ վարդապետի եւ ձեռնադրութեան

- ընթացքին կատարած խարտաիլակի պաշտօնը: Սահակ Ա. Կաթողիկոս Խապայեան կարճ պահ մը ետք իրեն շնորհած էր արքութեան տիտղոս:
- <sup>19</sup> Մարգիս Ապտալեան, իր բանաստեղծի եւ գրադատի անունով ծանօթ որպէս Վահէ-Վահեան (1908-1998):
- <sup>20</sup> Չաւեն Արք. Տէր Եղիայեան (1868-1947)՝ պատրիարքն էր Թուրքիոյ հայոց երբ Թուրքիոյ օրուան վարիչները կը գործադրէին Հայոց Յեղասպանութիւնը եւ զինք կ'արքայութիւն Իրաք: 1923ին հրաժարելէ ետք պատրիարքութենէն, ան գործօն դերակատարութիւն մը պիտի ունենար Մելգոնեան Կրթական Հաստատութեան հիմնադրութեան գծով Կիպրոսի մէջ, իսկ 1932ին կոկորդի վիրահատութեան մը հետեանքով խօսելու կարողութիւնը կորսնցնելով պիտի քաշուէր ազգային-եկեղեցական բեմէն, իր յուշերուն Գահիրէի մէջ հրատարակութեան օրերուն աչքերը փակելու համար Պաղատաւ:
- <sup>21</sup> Իրաւաբան Տելեմաք պէյ Թիքիւնճեան եղած է անդամ Հայ Յեղափոխական Դաշնակցութեան մինչեւ իր հրաժարումը անկէ 1927ին, ըմբոստանալով կուսակցական վարիչներու որդեգրած ուղղութեան դէմ: Վարած է Գահիրէի մէջ պարսկական հիւպատոսի պաշտօնը եւ տարիներով անդամակցած Թեմական ու Քաղաքական ժողովներուն:
- <sup>22</sup> Վահան Թէքեանի քառասնամեայ գրական գործունէութիւնը նշելու նպատակով Յոբելեանական Մարմինը կազմուած է 1933 Յունիսին ՀԲԸՄ Փարիզի մատենադարանի սրահին մէջ, պատուոյ նախագահութեամբը Աւետիս Ահարոնեանի, Տիգրան Կամսարականի, Արշակ Չօպանեանի եւ չորս ուրիշներու:
- <sup>23</sup> *Մէր* քերթողագիրքը: Վահէ-Վահեան *Միտնի* 1933ի 9րդ թիւով հատորին մասին պիտի ստորագրէր գրախօսական մը, որմէ հատուածներ պիտի արտասպուլէին Թէքեանի գրական գործունէութեան քառասնամեակին նուիրուած գրքոյկին մէջ (տե՛ս՝ *Յոբելեան Վահան Թէքեանի Քառասնամեայ Գրական Գործունէութեան*, հրատարակուած Կեդր. Յանձնախումբին կողմէ, Փարիզ, 1933, էջ 67):
- <sup>24</sup> Արշակ Չօպանեան (1872-1954)՝ գրագէտ, գրադատ, «հայ մշակոյթի դեսպան» եւ մասամբ նոցին: Տեղին է նշել թէ ՌԱԿի անդամագրուած երկու գաղափարակիցներուն՝ Չօպանեանի եւ Թէքեանի, յարաբերութիւնները ձգտելով վիճակ մը ստացած էին Չօպանեանի յոբելեանի նշման շրջանին, քանի որ Թէքեան կը գտնէր թէ Չմիտնիոյ աղէտն ու իր հետեանքները դարմանելու հարկին տակ դրուած սփիւռքահայ հաւաքականութիւններու համար անտեղի ճիգի վատնում մը պիտի ըլլար գաղութ գաղութ կատարելի յոբելեանի մը կազմակերպումը:
- <sup>25</sup> Փարիզի մէջ Չօպանեանի հրատարակած ազգային, գրական, գեղարուեստական ամսագիրը, որ երկու ընդմիջումներով լոյս տեսած է 1911-1949ին:
- <sup>26</sup> Վահան Թէքեան, *Մէր*, քերթուածներ 1919-1933, Փարիզ, 1933, 132 էջ: *Հոգեր, Հրաշալի Յարութիւն* եւ *Կէս Գիշերէն Մինչեւ Արշալոյս* հատորներէն ետք Թէքեանի չորրորդ ժողովածուն:
- <sup>27</sup> Յովհաննէս Պօղոսեան (1889-1972): Ուսումով իրաւաբան, ՌԱԿ գործիչ Պօղոսեանի անունը կապուած կը մնայ զանազան օրաթերթերու եւ պարբերաթերթերու՝ իբրեւ խմբագիր եւ երբեմն ալ հիմնադիր: Պօղոսեան *Արեւի* խմբագրութիւնը վարած է 1932-1938ին որոշ ընդմիջումներով:
- <sup>28</sup> ՀԲԸՄը: Թէքեան մօտիկ եղած է Միութեան եւ անոր հիմնադիրներուն, եւ անոր զանազան մարմիններուն աշխատակցելով հանդերձ, անհրաժեշտ պարագային հրապարակաւ քննադատած է անոր վարիչներն ու առաջարկներ ներկայացուցած անոնց, որպէսզի Միութիւնը յարատեւօրէն իր ուշադրութիւնը զանուած պահէ սփիւռքի հայոց ազգային դիմագիծի պահպանման: 18 Հոկտեմբեր 1936ին, Պէյրութի մէջ Թէքեանի ի պատիւ սարքուած գրական երեկոյթի ընթացքին, բանաստեղծը խօսք առնելով ի միջի այլոց ըսած է. «**ՀԲԸՄիւլթեանն ջերմօրէն փարողներէն եւ հիացողներէն մէկն եմ, որու գործունէութեան մասին գրած եմ**

որքան զնահատական նոյնքան ալ քննադատական յօդուածներ: Սակայն Միութեան բարեկամներուն եւ հակառակորդներուն տարբերութիւնը սա՛ է թէ մենք կ'ուզենք որ Միութիւնը ո՛չ թէ լճանայ, այլ միշտ վերանորոգուի, իր սխալները սրբագրէ աւելի անթերի կերպով կարենալ ծառայելու համար մեր բազմաչարչար ազգին» (Արն, Գահիրէ, 26 Հոկտեմբեր 1936):

<sup>29</sup> Վարժութիւն դարձած սովորութիւն (ֆրնս.):

<sup>30</sup> 1923ին Գաբրիէ Լագեանի արտօնատիրութեամբ հիմնուած եւ անոր համախմբագրութեամբ հրատարակուած օրաթերթ:

<sup>31</sup> 1932ին Ռումանիոյ մայրաքաղաքին մէջ լոյս տեսած եռօրեայ՝ Յակոբ Ճ. Սիրունիի (1890-1973) խմբագրութեամբ:

<sup>32</sup> Շատրշ Միսաբեանի կողմէ 1925ին հիմնադրուած եւ խմբագրուած օրաթերթ: Քիւնստիտիւտի լուստիւնը կը բացատրուի ՀՅԴ-ՌԱԿ պատկանելութիւններով, *Յառաջը* ըլլալով ՀՅԴի ուղեգիծին հետեւող թերթ, մինչ Թէքեանը ըլլալով ՌԱԿ կեդրոնական դէմքերէն մին:

<sup>33</sup> Գահիրէ լոյս տեսնող *Յուսաբեր* օրաթերթը պաշտօնական խօսափողն էր ՀՅԴի եւ Թէքեան յաճախ խայթոցներու կ'ենթարկուէր անոր խմբագիրներէն ու աշխատակիցներէն իր ազգային-քաղաքական ներհակ կեցուածքներուն համար ... յաճախ փոխադարձելով այդ խայթոցները: Թերթը չէր վարանած իր խմբագրական սիւնակով Թէքեանը խստագոյն անուանարկման ենթարկել, երբ ան 1931ին *Արն*ի մէջ ստորագրած էր իր նշանաւոր յօդուածաշարքը հայտնութեամբ յարաբերութիւններու մասին, եւ այնուհետեւ ալ շարունակած էր իր խայթոցները, մինչեւ իսկ յանդգնելով Թէքեանը արինակից ներկայացնել Թալաաթի: Պետք է նշել թէ Թէքեանի պահանջներուն տեղի տալով, *Յուսաբեր* հրատարակած էր լուսաբանութիւն մը, յետո կոչելով անարգական վերագրումը (*Մամուլի Մէջ* հատորին «Նամականի» եւ «Յատելուած» բաժիններուն մէջ):

<sup>34</sup> Ահաւասիկ ակնարկեալ ծանուցումին բովանդակութիւնը. «*Լոյս տեսաւ Վահան Թէքեանի ՄէՐ քերթուածներ (1919-1933): Թէքեանի այս նոր հատորը ունի 130 մեծագիր էջեր եւ կը բովանդակէ 90ի չափ բանաստեղծութիւններ: Գին 12 ֆրանք (վճարումը կանխիկ): Գրավաճառներուն 25 առ 100 գեղջ: Դիմել հեղինակին՝ 22, Rue Saint Sulpice, Paris (6): Ստանալու համար այս գիրքը դիմել՝ Արշամ Տատրեանի, 29 Բիւ Ֆակկար, Գահիրէ»:*

<sup>35</sup> Չարչարանք (ֆրնս.):

<sup>36</sup> Գրական-հրատարակագրական հակումներու տէր Գեղամ Ֆէներճեան (1903-1986), որ կը վայելէր սրտակցութիւնը Շահան Շահնուրի, յետագային պահ մը պիտի վարէր Փարիզի *Ապագայ* թերթին խմբագրութիւնը: Եղած է անդամ Թէքեանի յորելեանին նշման Կեդրոնական Յանձնաժողովին:

<sup>37</sup> Երուանդ Տէր Անդրեասեան (1865-1945)՝ բանասէր, հրատարակագիր եւ թարգմանիչ: Վարած է խմբագրութիւնը զանազան թերթերու: Ինք է առաջին հայացնողը Ֆրանց Վերֆելի *Մուսա Լերան Քառասուն Օրերը* հանրածանօթ գործին:

<sup>38</sup> Արամ Անտոնեան (1885-1952)՝ եղած է մեղուաջան աշխատող մը եւ իր լուսնային բերած հայ արձակին, երգիծագրութեան, դասագիրքերու պատրաստութեան, հրատարակագրութեան, բանասիրութեան եւ պատմագրութեան, վերջին պարագային յատկապէս հակելով Հայկական Տեղասպանութեան վերաբերող նիւթերու վրայ: Վարած է Փարիզի Նուպարեան Մատենադարանի տնօրէնութիւնը:

<sup>39</sup> Քիմիագետ եւ գիտարար Առաքել Չաքրեան (1885-1954): Ի դէպ, տեղին է նշել թէ 1934ի Փետրուար 11ին Փարիզի մէջ տեղի ունեցած Թէքեանի յորելեանի հանդիսութեան ընթացքին Չաքրեան ինք ընթերցած է այդ առիթով ստացուած ուղերձներն ու շնորհատրական հեռագիրները, Յորելեանական Կեդրոնական Յանձնաժողովի ատենադպիրի հանգամանքով:

- <sup>40</sup> Փարիզի հարաւարեւմտեան արուարձաններէն մին:
- <sup>41</sup> Վարձու յարկաբաժին (ֆրնս.):
- <sup>42</sup> Գէորգ Աբուլեան (1856-1933)՝ պատմաբանասիրական յօդուածներու հեղինակ եւ կրթական մշակ. հիմնական դերակատարութիւն ունեցած է Կարնոյ Սանասարեան Վարժարանի հիմնադրութեան մէջ, ուր եւ պաշտօնավարած է մինչեւ 1912:
- <sup>43</sup> Հրանտ Սամուէլ (1891-1977)՝ գրավաճառ եւ հրապարակագիր, տերը՝ Փարիզի Արեւելեան Գրատան:
- <sup>44</sup> Միհրան Տամատեան (1863-1945)՝ յեղափոխական եւ կուսակցական գործիչ, ուսուցիչ, հեղինակ յեղափոխաշունչ երգերու: Կիլիկիոյ ակնբարք մը տեսած անկախութեան հռչակման դարբիններէն եւ առաջին ու վերջին վարչապետն անոր: Թէքեանի մահուան առիթով ձեռնարկած է յօդուածաշարքի մը *Արեւի* մէջ, բայց վերահաս մահը ընդհատած է զայն:
- <sup>45</sup> Վճարագիր (ֆրնս.):
- <sup>46</sup> Ակնարկութիւն բանաստեղծ Ալեք Գլըճեանի (տե՛ս՝ *Վահան Թէքեան Նամականի*, կազմեց, խմբագրեց եւ ծանօթագրեց Աւետիս Գ. Սանճեան, Հրատ. Թէքեան Մշակութային Միութեան, Լոս Անճելըս, 1983, էջ 353-354):
- <sup>47</sup> Ազգային վիճակահանութենէն (ֆրնս.):
- <sup>48</sup> Իրերայաջորդ թուաշարք (ֆրնս.):
- <sup>49</sup> 16 Հոկտեմբեր 1933 թուակիր նամակը, որ լոյս տեսած է Թէքեանի քառասնամեայ գրական գործունէութեան յօբելեանական գրքոյկին 8էն 10րդ էջերով, ուղղուած է Լեւոն Կիւմիշկերտանի՝ ատենապետ Յոբելեանի Կեդրոնական Յանձնաժողովին, յատկապէս շեշտելով Թէքեանի *«պարկեշտ եւ ազնիւ մարդու նկարագիրը»*, որպէս տիրական գիծ, որ իր դրսեւորումը գտած է գրագէտին, հրապարակագրին, ուսուցչին, գործիչին եւ ազգային դէմքին գործունէութեան մէջ:
- <sup>50</sup> Յակոբ Օշական կամ Քիւֆէճեան (1883-1948)՝ արեւմտահայ գրաքննադատութեան տիրական դէմքը:
- <sup>51</sup> Օշական Յոբելեանական Յանձնախումբին դրկած է Մելգոնեան Կրթական Հաստատութեան մէջ Թէքեանի մասին իր ներկայացուցած դասը, որմէ հատուած մը լոյս տեսած է վերոյիշեալ գրքոյկին 11-15 էջերով:
- <sup>52</sup> Օշական, տէր իր խոստումին, ընդլայնած է զայն եւ ընդլայնուած աշխատութիւնը ներկայացուցած՝ Դուրեան Մրցանակին: Գրագէտ Միքայէլ Ս. Կիրճեան, քննելով ձեռագիրը, զայն արժանի նկատած է մրցանակին եւ Թարգմանչաց Տօնին առիթով Թորգոմ պատրիարք Գուշակեանի կողմէ իրապէս աշխատութիւնը յայտարարուած է երկամեայ մրցանակին 1936 տարուան 4 մրցանակակիրներէն մէկը: Ուսումնասիրութիւնը ցարդ կը մնայ անգտանելի: Յոբելեանական գրքոյկին մէջ օգտագործուած դասը - իր ամբողջութեամբ - մեր կողմէ հրատարակուած է 1985ին (Յակոբ Օշական, *Վահան Թէքեան*, Պէյրութ, 1985, Հրատ. ՀԲԸՄիութեան Վահրամ Ապտալեան Հիմնադրամի): Կորուսեալ ուսումնասիրութեան մասին մանրամասնութիւններու համար տեսնել յիշեալ գործին 15-22 եւ 121-129 էջերը:
- <sup>53</sup> Վաւերագրեր (ֆրնս.):
- <sup>54</sup> Գրիգորիս Եպս. Պալաքեան կամ Պալագեան (1879-1934)՝ հանրաժանօթ իր *Հայ Գողգոթան* գործով, 1925ին Գէորգ Ե. կաթողիկոսին կողմէ նշանակուած էր հայրապետական պատուիրակ Երոպայի հայոց: *«Երկու տարի ետք Պալաքեան ձեռն-թափ ըլլալով գործէ քաշուեր էր եւ ինքնազլուխ կերպով, առանց Մայր Աթոռի հաւանութեան, Մարտիրոյ առաջնորդ կարգեր էր ինքզինք, այդ պաշտօնին վրայ մնալով մինչեւ 1934, երբ դաշնակցական կուսակցութեան համակիրներ ստիպեր էին հրաժարեցնել զինք իր պաշտօնէն»* (Չաւէն Ա. Քինյ. Արգումանեան, *Ազգապատում*, Դ. հատոր, Բ. գիրք (1930-1955), Նիւ Եորք, Ս. Վարդան Մատենաշար, 1997, էջ 75): Թէքեան յստակօրէն վերապահութիւն մը ունի Պալաքեանի անձին ու նկարագրին

- նկատմամբ: Կը թուի թէ Թէքեան ի մտի ունի «պալա» արաբերէն բառը, որ աղէտ կամ փորձանք կը նշանակէ:
- <sup>55</sup> Բարզէն Աթոռակից Կաթողիկոս Կիլիսեւեան (1868-1936):
- <sup>56</sup> Մեսրոպ Ժամկոչեան (1881-1935)՝ որպէս հոգեբան վկայուած է Ուստրի Բարք Համալսարանէն, Միացեալ Նահանգներ, 1914ին պահ մը վարած է խմբագրութիւնը Հայ Սահմանադրական Ռամկավար Կուսակցութեան Ազգ թերթին, 1914-1917 եղած է տնօրէնը Ադեքսանդրիոյ Պօղոսեան Ազգային Վարժարանին, ապա ազգային եւ կրթական պաշտօններով ղեգեբած է Ատանայէն մինչեւ Կիպրոս, Երուսաղէմ, Դամասկոս եւ Պէյրութ, ուր եւ մահացած է:
- <sup>57</sup> Յարութիւն կամ Արթին Ամիրա Պեգճեան (1771-1834)՝ վարած է Օսմանեան Կայսրութեան Պալատական Գանձի վերատեսչութիւնը եւ նկատուած իր ժամանակի կարեւորագոյն ազգային բարերարներէն մին: Իր նուիրատուութեամբ է որ 1834ին կեանքի կոչուած է Պոլսոյ Ս. Փրկիչ Ազգային Հիւանդանոցը, որ կը գործէ մինչեւ այսօր: Հոմանիշ դարձած է բարեգործութեան:
- <sup>58</sup> Մամլոյ հաղորդագրութիւն մը կը յայտնէ թէ Երուանոյ եպիսկոպոս Փերտահճեան իբրեւ «Կաթողիկոսական Քննիչ» մեկնած է Լիոն՝ թեմին կազմակերպութեամբ զբաղելու համար: Դիշոյ այս շրջանին Երուանոյ Եպս. ընտրուած էր Պուլկարիոյ Հայոց Առաջնորդական Տեղապահ:
- <sup>59</sup> Առաքելութիւն (արեւելահայոց կողմէ գործածուող օտարաբանութիւն):
- <sup>60</sup> 1932ին Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան որպէս պաշտօնական հրատարակութիւն Բարզէն Աթոռակից Կաթողիկոսի խմբագրութեամբ հրատարակուիլ սկսած պարբերաթերթը: Չեռքի տակ չունենալով հաւաքածոն, չկրցանք ստուգել թէ ակնարկութիւնն ինչի եւ որո՞ւ կը վերաբերի ստուգի:
- <sup>61</sup> Սահակ Ա. Խապայեան կաթողիկոս Մեծի Տանն Կիլիկիոյ (1849-1939): Ինք էր որ տեղահանեալ կիլիկեհայութեան հետ տեղահանեալ Կիլիկեան Աթոռը վերահաստատելու աշխատանքին լծուեցաւ նախ Հալէպ եւ ապա Անթիլիաս, Լիբանան:
- <sup>62</sup> Դաշնակցութեան կողմէ հնչակեան Միհրան Աղազարեանի սպանութեան վաղորդայնին, Պէյրութի ֆրանսատառ *L'Orient* օրաթերթը իր 20 Հոկտեմբեր 1933ի թիւով հայ ընթերցողները հրախրեր էր պատասխանելու հարցարանի մը՝ ի միջի այլոց շօշափելով այնպիսի հարցեր, ինչպիսիք էին միջհայկական կուսակցական յարաբերութիւնները եւ հայոց ընթացքը զիրենք հիւրընկալած երկիրներու՝ ի մասնատրի Սուրիոյ եւ Լիբանանի հանդէպ: Տամատեանի պատասխանները *L'Orient* հրատարակեր է իր 4 եւ 8 Նոյեմբերի թիւերով: Այդ պատասխանները *Արև* թարգմանաբար տուեր է 4 Դեկտեմբերի եւ յաջորդող երեք թիւերով «Հարցարան Մը Սուրիոյ Հայութեան Մասին Եւ Պ. Մ. Տամատեանի Պատասխանը» խորագրով: Հոն Տամատեան կ'ընդգծէ թէ թերթը սխալ մը թոյլ տուած է հայկական պարագան նոյնացնելով հրեականին, եւ յստակացնելէ ետք թէ հայերը ունեցած են եւ ունին հայրենիք մը, կ'աւելցնէ. «**Հայերը ազգային ոչ մէկ պահանջք ունին այն երկիրներուն մէջ, որոնք իրենց հայրենիքէն դուրս կը մնան եւ ուր հիւրընկալուած են**»:
- <sup>63</sup> Կը թուի թէ «Մահուան» խորագիրը կրող բանաստեղծութիւնը, որ լոյս տեսած է *Միտն* 1934ի Փետրուարի թիւով (էջ 44), Թէքեանը յաջողած է դրկել այս նամակին հետ:
- <sup>64</sup> Արձակագիր, հրապարակագիր, խմբագիր եւ կուսակցական գործիչ Անդրանիկ Անդրէասեան (1909-1996)՝ զանազան առիթներով հրապարակաւ անդրադարձած է գաղափարակից Թէքեանի գրականութեան, զգացնելով իր սերը հանդէպ քերթողին ու անոր գործին:
- <sup>65</sup> Հայկ Պերպէրեան (1887-1978)՝ բանասէր, հրատարակիչ խմբագիր *Revue des Études Arméniennes* հանդէսին: Վարած է Հայ Ազգային Պատուիրակութեան քարտուղարի պաշտօնն ու մօտէն գործակցած Պօղոս Նուպարի եւ ՀԲԸՄի ղեկավար մարմիններուն հետ:

- <sup>66</sup> Սուրբ Պողիկտոս Մելիտինացի (մահ. 259ին), ըստ քրիստոնեական ասանդութան, եղած է Վալերիանոս կայսեր օրով հռովմեական բանակի սպայ եւ նահատակուած Պատմական Հայաստանի Մելիտինէ քաղաքին մէջ: Փիէր Քորնէյ, ներշնչուած նահատակին կեանքի պատմութենէն, 1642ին գրած է իր *Պողիկտոս* ողբերգութիւնը, գոր 1878ին Շարլ Կունօ վերածած է օփերայի: Օշական Թորգոմ Արք. Գուշակեանի քարգմանութիւնը կը նկատէ «*չբեղ իրագործում*» եւ կը գտնէ թէ ան յաջողած է մնալ քատերական երկ (Յ. Օշական, *Համապատկեր Արեւմտահայ Գրականութեան, Եօթներորդ Հատոր, Արուեստագէտ Մերունդ*, Հրատ. Կաթողիկոսութեան Հայոց Մեծի Տանն Կիլիկիոյ, Անթիլիաս, Լիբանան, 1979, էջ 51-52):
- <sup>67</sup> Փոլ Վերլէնի «Արուեստ Քերթողական» բանաստեղծութեան առաջին տողը, որ կը նշանակէ՝ երաժշտութիւնը ամէն բանէ առաջ: Թէքէեան կը բաժնէր Վերլէնի հաստատմանը:
- <sup>68</sup> Փոլ Վերլէն (1844-1896)՝ հիմնադիրներէն՝ ֆրանսական բանաստեղծութեան խորհրդապաշտ հոսանքին: Թէքէեան հայացուցած է անոր քերթուածներէն մի քանին (Վահան Թէքէեան, *Ամբողջական Երկեր, Հատոր 5, Ուսանալու Թարգմանութիւններ*, Գահիրէ, անթուակիր, էջ 105-112):
- <sup>69</sup> Գրիգոր Պարոն-Տէր, ծագումով գանձակեցի, վարած է Երուսաղէմի Հայոց Պատրիարքութիւնը 1613-1645ին: Ընդհին անոր նախաձեռնութիւններուն եւ հետապնդումներուն, պատրիարքութիւնը ոչ միայն կրցած է ձերբազատիլ իր պարտքերէն, այլեւ՝ ընդարձակուիլ նոր կարածներու ձեռք բերումով:
- <sup>70</sup> Ակնարկութիւն հեռագրալուրին, որ կը տեղեկացնէր ամերիկահայոց առաջնորդ Դեռոնը Արք. Դուրեանի դաշունահարութեամբ սպանութիւնը Նիւ Եորքի Ս. Խաչ Եկեղեցոյ մէջ, պատարագի ընթացքին, 24 Դեկտեմբեր 1933ին: Եղեռնագործութիւնը հետեւած էր ՀՅԴ մամուլին մէջ եռագոյն դրօշին հանդէպ Դուրեան Արք.ի բռնած կեցումը դատապարտող կրքոտ տողերու, եւ հետաքննութիւնները յանգեցուցած էին այն եզրակացութեան, թէ Դաշնակցութիւնը էր կազմակերպիչը Ամերիկայի մէջ Հայաստանեայց Առաքելական Եկեղեցին պառակտած դէպքին:
- <sup>71</sup> Այսինքն դաշնակցականները:
- <sup>72</sup> Կարելի չեղաւ ստուգել Թէքէեանը նման պոռթկումի մղած գայթակղութեան իսկութիւնը:
- <sup>73</sup> Մուշեղ Մերոբեան (1869-1951)՝ եղած է քաւական խիզախ եւ սակայն խնդրայարոյց եկեղեցական եւ կուսակցական գործիչ մը: Իր եկեղեցական ծառայութիւնը արարած է կարգաթողութեամբ: Զբաղած է հրապարակագրութեամբ եւ հեղինակած՝ հասարակական-պատմական բովանդակութեամբ գիրքեր:
- <sup>74</sup> Յարմարելու (ֆրնս.):
- <sup>75</sup> Հետաքրքրական է գիտնալ թէ *Նոր Լուրի* Փարիզի աշխատակիցը թերթի ընթերցողներուն տեղեկացուցած է թէ յոբելեանէն գոյացած է 25,000 ֆրանք (*Արեւ, Գահիրէ*, 24 Փետրուար 1934, ա. էջ):
- <sup>76</sup> Յնցղատապ, թութք, աղետապ (ֆրնս.):
- <sup>77</sup> Պօղոս Բօլօլեան (1870-1949)՝ ընկերային եւ առողջապահական հարցեր արծարծող յօդուածներ ստորագրած է հայ թէ ֆրանսական մամուլի մէջ: Եղած է անդամ ՀԲԸՄ Կեդրոնական Վարչական Ժողովին եւ կարճատեւ շրջան մը գործած է որպէս Միութեան նախագահի պաշտօնակատար:
- <sup>78</sup> Գրիգոր Միսալեան (1867-1937)՝ երբեմնի տեսուչ Գահիրէի Գալուստեան Ազգային Վարժարանի եւ ապա տեսուչ Երուսաղէմի Ժառանգատրաց Վարժարանին:
- <sup>79</sup> Տիրան Արք. Ներսիսեան (1904-1989)՝ տեսուչն էր Ժառանգատրաց Վարժարանին: Անկի ուշ, ան վարած է առաջնորդութիւնը Ամերիկայի Հայոց Արեւելեան Թեմին, իսկ 1957ին ընտրուած է Երուսաղէմի Հայոց Պատրիարք, բայց ընտրութիւնը վաւերացուած չըլլալով պատկան իշխանութիւններու կողմէ, վերադարձած է Մ. Նահանգներ ու լծուած հոգեւորականներու պատրաստութեան աշխատանքին:

- <sup>80</sup> Գործի լծել (ֆրնս.):
- <sup>81</sup> Վահան Մալեգեան (1871-1966)՝ մասնագիտութեամբ իրաւաբան, գրական հակումով բանաստեղծ, բայց ամէն բանէ վեր ծանօթ իբրեւ երկարամեայ տնօրէնը ՀԲԸՄի եւ գլխաւոր սատարողներէն մին անոր տարածման ու հզօրացման:
- <sup>82</sup> Տեղին պիտի ըլլայ նշել թէ Օննիկ Պերպլեւեան հրաւիրուած է ստանձնելու տեսչութիւնը Պուրթըշի Ազալին Վարժարանին, երբ Գահիրէի մէջ արդէն կը փակուէր Պերպլեւեան Վարժարանն ու Շահան Պերպլեւեանն ալ կը մեկնէր Երուսաղէմ՝ ուսուցչական պաշտօնով:
- <sup>83</sup> Թէքեան 1913ին ուսուցչական պաշտօն ստանձնած էր Պոլսոյ Պերպլեւեան Վարժարանին մէջ, բայց հագիւ երկու դաս տուած, ուղեւորուած էր Կեսարիա՝ իբրեւ տեսուչ Ս. Կարապետ Վանքի վարժարանին, իսկ 1922ին կոչուած էր Պոլսոյ Ազգային Կեդրոնական Վարժարանի տնօրէնութեան պաշտօնին: Պաշտօն, զոր պիտի վարէր շատ կարճ պահ մը միայն, Չմիտնիոյ աղէտի շրջանին հարկադրուելով հեռանալ Պոլսէն: Վերջնականապէս հեռանալէ ետք Պոլսէն, Թէքեան ինքնակամ պիտի լծուէր հայ որբերու, ներառեալ՝ Կեդրոնականի իր աշակերտներուն, հոգատարութեան աշխատանքին:
- <sup>84</sup> Ճամբորդական արտօնագիր (ֆրնս.):
- <sup>85</sup> Ոչ-հպատակի մը տունալ երկրէ մը ուրիշ երկիր ճամբորդելը թոյլատրող փաստաթուղթ (ֆրնս.):
- <sup>86</sup> Տարանցիկ (ֆրնս.):
- <sup>87</sup> Վճարովի պատասխան (ֆրնս.):
- <sup>88</sup> Անհոգութիւն (ֆրնս.):
- <sup>89</sup> Գահիրէի Գալուստեան Ազգային Վարժարանը հիմնուած է Կարապետ աղա Գալուստեանի նուիրատուութեամբ 1854ին, գործելով Խորենեան անուան տակ մինչեւ 1897 եւ ընդգրկելով 1828ին հիմնուած Եղիազարեան Դպրատան աշակերտները: 1907ին վարժարանը ամփոփուած է Պօղոս Նուպար փաշայի ծախքով շինուած նոր դպրոցաշէնքի մը մէջ, միշտ Գահիրէ՝ նախկինէն տարբեր թաղամաս մը:
- <sup>90</sup> Հայկ Պերպլեւեան, ծանօթագրուած նախապէս:
- <sup>91</sup> Յետագային Եղիշէ Պատրիարք Տէրտէրեան (1910-1990): Իր բանաստեղծական շնորհներուն համար զանազաններէ զնահատուած, ան պատասխանատու կը նկատուի Թէքեանի կեանքին եւ գործին նուիրուած Օշականի նախապէս ակնարկելալ ուսումնասիրութեան կորուստին համար:
- <sup>92</sup> Գրիգոր Կիրակոսեան (1888-1974)՝ կրթական մշակ, թարգմանիչ եւ միութեանական գործիչ, որ Մալեգեանի մահէն ետք վարած է ՀԲԸՄի Ընդհանուր Տնօրէնի պաշտօնը:
- <sup>93</sup> Մամբրէ Եպս. Սիրունեան, յետագային առաջնորդ, Թորգոմ Արք. Գուշակեանի պատրիարքացումէն ետք կը վարէր Եգիպտոսի Հայոց Առաջնորդական Փոխանորդի պաշտօնը:
- <sup>94</sup> Հակազդեցութիւն (ֆրնս.):
- <sup>95</sup> Սմբատ Եպս. Գազազեան (1875-1935)՝ վարած է Պոլսոյ Պատրիարքութեան փոխանորդութիւնը Չաւեն Տէր Եղիայեան եւ Մեսրոպ Նարոյեան պատրիարքներու օրով: Նկատուած է պարտաճանաչ ու պարկեշտ հոգեւորական:
- <sup>96</sup> Թեքութիւն (ֆրնս.):
- <sup>97</sup> Շաւարշ Նարդունի (Այվազեան) (1898-1968)՝ բժիշկ եւ արձակագիր: Նարդունի-Թէքեան յարաբերութիւնը չէ եղած սիրալիր եւ իր դրսեւորումը գտած է ատենին մամուլի մէջ (*Մամուլի Մէջ*, էջ 311-322):
- <sup>98</sup> Նարդունի *Հայ-Բոյժ* բժշկական-ժողովրդական ամսագիրը հիմնած է 1934ին եւ հրատարակած մինչեւ 1967:
- <sup>99</sup> Յակոբ Օշականը:
- <sup>100</sup> Ընշում (ֆրնս.):

- <sup>101</sup> Երակային ճնշում, հոգեկան ճնշում եւ ոճական ճնշում (ֆրնս.):
- <sup>102</sup> Շահան Պերպլերեան (1891-1956)՝ բազմակողմանի շնորհներով էր օժտուած իբրեւ մանկավարժ, երաժշտագէտ, հոգեբան եւ իմաստասէր: Եղանակատրուած է Թէքէ-եանէն բանաստեղծութիւններ, որոնք 1981ին հրատարակուած են Նիւ Եորքի մէջ «Եօթը Երգեր Թէքէեանէն» խորագրով: Իր մտքի հարուստ ժառանգին մեծ մասը հատորով լոյսին բերուած է յետմահու:
- <sup>103</sup> Գալիթ Անյաթ Ներզիհնացի (Ե.-Չ. դարեր)՝ եղած է նոր պղատոնեան աղէքսանդրեան դպրոցի ուղղութեան ամենափայլուն հետետողներէն մին եւ «Անյաթ» պատուանունն արժանացած է հրապարակային վեճերու մէջ իր առաւելութիւններուն համար: Իր երկերուն մէկ մասը գրած է յունարէնով եւ հիմնական դերակատարութիւն մը ունեցած է հայ իմաստասիրական-տրամաբանական միտքի ձեւաւորման ու զարգացման մէջ:
- <sup>104</sup> Թորգոմ Պատրիարքի առաջարկը առիթ պիտի դառնար որ Թէքէեան թողթին յանձնէր *Աստուածաշունչի* թարգմանութեան 1500ամեակին առթիւ գրուած երեք քերթուած՝ «Ազնուաթուղթ», «Ամրոց» եւ «Ս. Սահակ» (Վահան Թէքէեան, *Հայերգութիւն եւ Այլ Քերթուածներ (Տպագրեալ եւ Անտիպ)*, Գահիրէ, Տպագր. «ԱՐԵԻ»-ի, 1943, էջ 118-120:
- <sup>105</sup> Թէքէեան Հայաստան հաստատուելու հրաւերներ ստացած էր գրագիտուի Չապէլ Եսայեանէն «պաշտօնականի մօտ ձեռով մը» (*Արեւմտահայ Գրողների Նամակահի, Գիրք VI, Պրակ I*, կազմեց եւ ծանօթագրեց Գոհար Ազնուրեան, Երեւան, Երեւանի Համալսարանի Հրատ., 1972, էջ 343) եւ քերես ալ Հայաստան այցելած ու վերադարձած ռամկավար ազատական ղեկավար դէմք Հրաչ Երուանդէն (*Վահան Թէքէեան Նամակահի*, էջ 390):
- <sup>106</sup> Սատրէոս Եպս. Գայրձեան (1861-1935)՝ որ մահուան պահուն վանքին ամենատարեց միաբանն էր, առաւելաբար զբաղած է տեսչական, ելեւմտական եւ կալուածային հարցերով: Եղած է անդամ միաբանութեան Տնօրէն Ժողովին ու տարիներով վարած ատենապետութիւնը Միաբանական Ընդհանուր Ժողովին:
- <sup>107</sup> Շահէ Գասպարեան, արդէն արքեպիսկոպոս, Լիբանանէն Երոպա կը մեկնէր, հոնկէ անցնելու Միացեալ Նահանգներ եւ ստանձնելու թեմակալ առաջնորդի պաշտօնը: Միջանկեալ, ան կ'որոշէ հանդիպիլ Ս. Էջմիածին, ուր եւ կը կատարէ իր հաւատարմական ուխտի պատարագը...: Քանի մը օր ետք, սակայն, կը վախճանի Երեւանի Ինթուրիսպ պանդոկին մէջ:
- <sup>108</sup> Նամակաբաշխութիւն (թրք.):
- <sup>109</sup> 1935 Դեկտեմբեր 31ին լոյսին եկած ութ էջանի բացառիկին երկրորդ էջով լոյս է տեսած Թորգոմ Արք.ի «Ողջոյն Տուր Միմեանց...» տաղաչափեալ կտորը, հետեւեալ ծանօթութեամբ. «*Պատրիարք Ամեն. Տ. Թորգոմ Ս. Արքեպս. Գուշակեան մեր խնդրանքին հաճեցաւ պատասխանել 'Արեւ'ի Կաղանդի թիւին համար ղրկելով այս գեղեցիկ քերթուածը, որ լոյս կը տեսնէ Երուսաղէմի 1936ի օրացոյցին սկիզբը*»: Շահան Պերպլերեանի «Կոմիտաս Վարդապետ» գրութիւնը լոյս է տեսած եօթերորդ էջով, «*Քաղուած 'Միօն'ի յառաջիկայ թիւէն*» փակագծային ծանօթութեամբ: Օշականէն ոչինչ լոյս տեսած է:
- <sup>110</sup> *Արեւի* 22 Դեկտեմբեր 1936ի թիւով եւ Ք. ստորագրութեամբ իբրեւ անկախ կարծիք հրատարակուած է «Քանի Մը Խօսք 'Միոն' Ամսագրի Համար» գրութիւնը, ուր հեղինակը կը յայտնէ թէ ամսագիրը առաւելաբար կը լեցուի Թորգոմ Պատրիարք Գուշակեանի կողմէ, վարդապետներէն ոչ ոք գրեթէ գրիչ կը շարժէ անոր մէջ, եւ հակառակ անոր որ Պատրիարքին «*խմբագրականներն ու միւս գրուածքները հոյակապ կտորներ են*», անոնք մատչելի չեն ժողովրդական զանգուածներու: Յօդուածագիրը կը խնդրէ որ միաբանութիւնը իրագործէ հանրամատչելի շաբաթաթերթի կամ ամսագրի մը հրատարակութիւնը:

- <sup>111</sup> Կարելի չեղաւ գտնել խնդրոյ առարկայ նիւթը:
- <sup>112</sup> *Հայաստանի Կոչնակը* լոյս տեսած է նախ Պոսթոն եւ ապա Նիւ Եորք, 1900-1968ին, առաւելաբար իբրեւ շաբաթաթերթ, քաղաքական, գրական-գեղարուեստական եւ կրօնաբարոյական բաժիններով:
- <sup>113</sup> Վենետիկի Միախարեան Միաբանութեան հայագիտական, բանասիրական, գրական հանդէսը, որ հրատարակուիլ սկսած էր 1843ին:
- <sup>114</sup> Ակնարկութիւն ազգային երեսփոխանական ընտրութեան, որ տեղի ունեցած է 20 Գեկտեմբերին եւ աւարտած աւանդական երեք կուսակցութիւններու միացեալ ցանկով ներկայացուած անհատներու «գրեթէ միաձայն» յաղթանակով:
- <sup>115</sup> Քուէատուի տոմս (ֆրնս.):
- <sup>116</sup> Կրծքահեղձութիւն (ֆրնս.):
- <sup>117</sup> Կեղծ փողացաւ (ֆրնս.):
- <sup>118</sup> Տիրան Պէլլէրեան շրջան մը եղած է հոգաբարձու Գահիրէի Գալուստեան Ազգային Վարժարանին:
- <sup>119</sup> Ախտաճանաչումով (ֆրնս.):
- <sup>120</sup> Նամակին յետգրութենէն դատելով կարելի է որոշապէս ըսել թէ ակնարկուածը 1925ին, իր մօր մահուան առիթով գրած Թէքէեանի «Գերեզմանք» քերթուածն է, որ հրատարակուած է *Միտի* 1937ի 10րդ թիւով, էջ 316: Հաւանաբար զայն շատ «ընտանեկան» նկատելուն պատճառով է որ Թէքէեան այս բանաստեղծութիւնը չէ ընդգրկած իր *Հայերգութիւն* հատորին մէջ:
- <sup>121</sup> Կը թուի թէ Թէքէեան կրկին կ'ակնարկէ Ազգային Երեսփոխանական Ժողովի արդիւնքին եւ իր անձին հանդէպ գործադրուած անտեսումին՝ հակառակ իր երկար տարիներու փորձառութեան եւ ծառայութեան:
- <sup>122</sup> ՌԱԿ Լիբանանի շրջանակի պաշտօնաթերթ *Չարթօնըրը* սկսած է լոյս տեսնել Թէքէեանի խմբագրութեամբ 26 Սեպտեմբեր 1937ին, Պէյրութ: Օրաթերթը կատարած է Կուսակցութեան Կեդրոնական Վարչութեան պաշտօնական խօսափողի դերը Վարչութեան Պէյրութ գտնուած տարիներուն:
- <sup>123</sup> «Գերեզմանք»ը՝ ծանօթագրուած նախապէս:
- <sup>124</sup> Ամերիկաբնակ ՌԱԿ գործիչ Գասպար Մովսէսեան Գահիրէ կը գտնուէր մասնակցելու համար ՌԱԿ Ընդհանուր Պատգամաւորական Ժողովին իբրեւ Ամերիկայի շրջանակի պատգամաւոր: Մովսէսեանէն այդ առիթով կը խնդրուէր յատուկ առաքելութեամբ մեկնիլ Սուրիա-Լիբանան: Պէյրութի մէջ ան պիտի յաջողէր ֆրանսական իշխանութիւնները համոզել որ վերացնեն *Պայքար* օրաթերթին Սուրիա-Լիբանան մուտքին նկատմամբ հաստատուած արգելքը (Յովհաննէս Պօղոսեան, *Կուսակցական Կեանքի Յուշերս*, Պէյրութ, 1987, էջ 54-55):
- <sup>125</sup> Ժորժ Ժաք Տանթոն (1759-1794)՝ եղած է ֆրանսական յեղափոխութեան ղեկավար ղեմքերէն մին, ներկայանալով իբրեւ պաշտպան փաստաբան ծայրայեղ գործողութիւններու: Նշանաւոր է արտաքին վտանգներու դիմաց իր արտասանած ճառը՝ «Յանդգնութիւն, Կրկին Յանդգնութիւն Եւ Միշտ Յանդգնութիւն»:
- <sup>126</sup> Ներկայանալի, վայելչատես դարձած (ֆրնս.):
- <sup>127</sup> Հարկի տակ չէր դներ զիս (ֆրանսաբանութիւն):
- <sup>128</sup> Ամէն գնով (ֆրնս.):
- <sup>129</sup> Հմուտ (ֆրնս.):
- <sup>130</sup> Ի դէպ (ֆրնս.):
- <sup>131</sup> Էօժէն Բաբագեան (1887-1963)՝ ՌԱԿ ղեկավար ղեմքերէն մին եւ հիմնադիրներէն մէկը Գահիրէի Հայ Ազգային Հիմնադրամին, ինքնական ստանձնած էր հայերէն լեզուն օտարաբանութիւններէ մաքրագտելու եւ անաղարտօրէն պահպանելու դերակատարութիւն մը:
- <sup>132</sup> *Արեւի* 9 Փետրուար 1933ի թիւով լոյս տեսած խմբագրականը կը կրէ «Չարգացած Եկեղեցականութիւնը» խորագիրը: Գոնսիլեանի մասին ուղղակի յիշատակութիւն

չկայ հոն, բայց խմբագիրը, տալով Խորեն Նարայեյի եւ Օրմանեանի օրինակները, կը հաստատէ. «ժամանակին երբ աշխարհի բազմաթիւ էին մեր մէջ զարգացած հայ եկեղեցականները Թուրքիոյ թէ կովկասի մէջ, ուրիշ եկեղեցիներէ մեզի եկած հոգեւոր պաշտօնեաները չէին մերժուեր», ու կ'աւելցնէ թէ խնդրոյ առարկայ շրջանին պէտք է դիրացնել զարգացած տարրերու մուտքը հայ եկեղեցիէն ներս:

<sup>133</sup> Խորեն Ա. Կաթողիկոս Մուրատբեգեան (1873-1938)՝ Մայր Աթոռի գահակալութեան ծանր պատասխանատուութիւնը ստանձնած էր հայ հոգեւորականութեան նկատմամբ Խորհրդային Իշխանութիւններու կեցուածքին առաւել կարծրացման տարիներուն: Հալածանքներու խորհրդանշական գագաթնակէտը դարձած էր կազմակերպումը կաթողիկոսին խեղղամահութեան:

<sup>134</sup> Թէքէեան 1936 Հոկտեմբերին Լիբանանէն Գահիրէ վերադարձին, կը մտածէ գրական հանդէս մը հրատարակելու մասին, սակայն ծրագիրը տակաւին չհրագործուած, կրկին կը մեկնի Լիբանան, նորահաստատ *Չարթօնք* օրաթերթին խմբագրութիւնը վարելու նպատակով: Այդպէս ալ ծրագիրը բնաւ իրականութեան չվերածուեցաւ:

<sup>135</sup> Տիգրան Հաճնեան (1877-1943): Իր կեանքի վերջալոյսին աղքատութեան դատապարտուած այս հայորդին, որ մտերիմն էր Թէքէեանի, վարած է Գահիրէի մէջ Մելգոնեան Գործատան տնօրէնի պաշտօնը, եղած է արտօնատէրը *Արեւ* օրաթերթին եւ իր քսակը լայն բացած՝ զանազան ազգային կարիքներու առջեւ:

<sup>136</sup> Կարդալ Յովիս:

<sup>137</sup> Սամուէլ Յ. Թումայեան (1912-1988)՝ տպարանատէր, հրատարակագիր եւ քարգմանիչ, որ կարճ պահ մը վարած է խմբագրութիւնը ՌԱԿ Մ. Նահանգներու արեւելեան ափի պաշտօնաթերթ *Պայքար* օրաթերթին:

<sup>138</sup> Կը թուի թէ Թումայեան չէ կրցած յաջողցնել տարեգիրքի հրատարակութեան ծրագիրը:

<sup>139</sup> Որքին, մաշկաբորբի տեսակ:

<sup>140</sup> Պաղեստին 1936 Ապրիլէն մինչեւ 1939 Մարտը ապրեցաւ խռովալից շրջան մը: Դժգոհ՝ հրեաներու Պաղեստին գաղթին նկատմամբ Բրիտանական Իշխանութեան թոյլատու կեցուածքէն, եւ նախատեսելով որ ծրագիրը կը միտէր հրեայ մեծամասնութիւն մը ստեղծելով ի վերջոյ հրեական պետութեան մը ստեղծումը ապահովելու, պաղեստինցի արաբներ 1936 Ապրիլին Հաճ Ամին Հիսէյնիի գլխաւորութեամբ ձեռնարկեցին ընդհանուր գործադուլի մը, որ ճանչցուեցաւ իբրեւ Արաբական Մեծ Ապստամբութիւնը: Յետագայ զարգացումները՝ կացութիւնը քննելու համար բրիտանական յատուկ յանձնաժողովներու կազմութիւն, գործադուլի ժամանակաւոր դադրեցում, երկուստեք զինեալ բախումներ, Նազարէթի մէջ բրիտանացի քոմիսէր Էնտրիօզի սպանութիւն, ձերբակալութիւններ, կրակմարներ, շրջագայութեան արգելքներ, եւն., պիտի ստեղծէին մտահոգիչ վիճակ մը նաեւ պաղեստինաբնակ հայոց համար: Այդ շրջանին, մօտաւոր հաշիւներով, աւելի քան 5000 արաբներ, 400 հրեաներ եւ 200 բրիտանացիներ զոհ գացած էին զինեալ բախումներու եւ ահաբեկչական գործողութիւններու:

<sup>141</sup> Կենսագրականը լոյս պիտի տեսնէր *Արեւի* 18 Օգոստոս 1945ի թիւով, զոյգ ծանօթագրութիւններով, թէ բնագիրը կը գտնուի Առաջնորդարանի դիւանատան մէջ եւ թէ կենսագրականը կանգ կ'առնէ 1922 թուականին վրայ, որ նիւթին գրառման տարին է: Յետագային, Պետրոս Յ. Տեփոյեան օգտագործած է այդ սեղմ աղբիւրը իր *Միհրան Տամատեան (1863-1945)* ընդարձակ աշխատութեան համար, որ իբրեւ թերթօս լոյս պիտի տեսնէր նախ *Արեւի* մէջ 1956ին եւ ապա *Չարթօնք* օրաթերթին մէջ իբրեւ թերթօս թիւ 52, 1985ին առանձին գիրքով մը հրատարակուելէ առաջ:

<sup>142</sup> Շարլ Պոտրլէր (1821-1867)՝ ֆրանսական բանաստեղծութեան տիտաններէն մին, որմէ Թէքէեան յաճախ կատարած է թարգմանութիւններ՝ մտերմութիւն մը գտնելով անոր եւ իր հոգեխառնութեան միջեւ:

---

<sup>143</sup> Թեքեանի բարգմանութեանը Պոտրլէրի «Մարդը Եւ Ծովը» բանաստեղծութիւնը լոյս տեսած է *Միտի* 1938ի 10րդ թիւով, էջ 302:

<sup>144</sup> Ժան Էքար (1848-1921)՝ ֆրանսացի բանաստեղծ, արձակագիր ու թատերագիր, որ ծանօթ է զառառական կէանքն ու մանկութիւնը նկարագրող քերթուածներով:

VAHAN TEKEYAN'S LETTERS TO TORKOM KOUSHAGIAN,  
ARMENIAN PATRIARCH OF JERUSALEM

(Summary)

VATCHE GHAZARIAN

Vahan Tekeyan (1878-1945) was one of the most gifted Armenian poets to survive the Genocide. He played a key role in shaping the Armenian Diaspora by actively participating in its formation as an intellectual, editor, teacher, protector of the Armenian orphans, and political leader. During those dark days, well-known clergyman, scholar, and poet, Patriarch Torkom Koushagian (1874-1939), inspired hope among the surviving faithful and passionately defended Holy Echmiadzin as the supreme spiritual center of the Armenian faith.

The relationship between Tekeyan and Koushagian began with their meeting in Constantinople. Their bond strengthened when both found themselves in Cairo, Egypt, and later, once Koushagian was elected the Armenian Patriarch of Jerusalem in 1931, through correspondence and meetings in Jerusalem..

The thirty letters, dated between 1931 and 1938 and reproduced in this paper, are representative of numerous letters written by Tekeyan to Koushagian, many of which have not yet come to light.

The correspondence sheds light on Tekeyan's personal life and career, touches upon lay and religious matters of interest, and provides insight into the poet's character, literary concepts, poetry, and journalism. The writer is revealed as a humble, shy person of frail health, who is challenged with both reconciling and responding to the injustices and actions that threaten Armenian communities and Armenian interests. The letters also reveal the writer's humor, which he often called upon when dealing with the tragic circumstances he and the early Diasporan community faced.

In essence, in Tekeyan's letters we find a man whose words and deeds are in harmony. They substantiate Patriarch Koushagian's opinion of the renowned poet as the honest, kind person of integrity that he was.